



"SION" an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in JERUSALEM

## ԲՈՎԱՆԴԻԱԿԱՆԻ ԹԻՒՆ

---

ԵՐԵՒ

<b>ԽՄԲԱԴՐԱԿԱՆՆ</b>		
— Մրապնդիչ Երեւոյթներ.	Զ. Վ. 2.	293
<b>ԿՐՕՆԱԿԱՆ</b>		
— Ներելի և Աճենելի Մեղքեր.	ՀԱՅԱԶՈՒՐ Ա. ՔՃՆՅ. ՈՍԿԵՐՉՉՈՅԱՆ	298
— Ցաւիսենական Թագաւորութիւնը.	ԶՈՒՄԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ 2.	301
<b>ԲԱՆԱՍՏԵՂԱԿԱՆ</b>		
— Յիշատակներ.	ԶԱԼԵՆ Վ. 2.	304
— Ազուաւերը	ԱՆԵԼ.	305
— * *	ՅՈՒ. ՇԵՐՈՅ.	305
— Խնձորունում.	Մ. ՄԱՆՈՒԺԱԿԵՄԱՆ	306
— Մանկութիւն.	Գ. ՃԻՒՊԵՔՅՈՅԱՆ	306
<b>ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ</b>		
— Գիլանիչի Գիցազներգութիւնը (10).	ԱՆՈՒԾՈՒՄՆ ԱՅԴ. ԶՊՀԱՆԵԱՆ	276
<b>ԳՐԱԿԱՆ</b>		
— Մերկոս Պետրեան.	Յ. ՕՇԱԿԱՆ	312
<b>ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ</b>		
— Պապ Առակունի (4).	ՀՐԱՆԴ. Ք. ԱՐՄԵՆ	317
<b>ՄԱՏԵՆԱԴՐԱԿԱՆ</b>		
— (ԽԵ) Յովիաննես Թլիւրոնցի (1).	Ն. ԵՊՈ. ՆՈՎԱԿԱՆ	323
<b>ՊԱՐԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ</b>		
— Մեռեալ Մովք (3).	ՊԱՐԴԵՒ Վ.ՐԴ. Վ.ԲԹԱՆԵՍԵԱՆ	330
<b>ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ</b>		
— Մանուկներու Բեմը.	ԶՈՒՄԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ 2.	332
<b>Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ</b>		
— Հեռագիրներ.		333
— Եկեղեցական-Բեմուկանի.		334
— Պատօնականի.		335
— Բարեպատական Նուերներ.		336
— Ցանկ Նիւրոց 1954 Տարւոյ.		338

**ՍԻՈՆ-ի Տարեկան բաժնեգիրն է՝  
բոլոր Երկիրներու համար՝ Անգլ. Շլին 20**

Redaction of the Armenian Monthly SION

Armenian Patriarchate,

P. O. B. 4001

Old City - Jerusalem

Via Amman (Jordan)

—≡ Uhūv =

**БЛ. СУРБ — УНО ТРДУН**

1954

«ԱՐԵՎԻ ԵՐԵՎԱՆ» ՊԵԿԱՏՄԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒ 11-12

ԽՄԲԵԳԻՔԱԿԱՆ

ԱՐՏՈՎԱԴԻՉ ԵՐԵՒԱՅԹՆԵՐ

Ծատ անգամ կը խօսուի ընդհանուր պարտուղականութեան մը մասին զոր զաղութներու մէջ իբրև ախտանից կը ցուցուի։ Ծատ անգամ կ'աւաղենք ներկան ու կը գառնանք անցեալին անոր մէջ փնտուելու պուտ մը քաղցրութիւն մեր ներկան անուշող։

Արտասահմանի մէջ ազգովիճն կը ծփանք անստուգութեան ալիքներուն  
վրայ։ Որքան ժամանակ որ կ'առլինք զանազան երկիրներու մէջ, կապուած  
կը միանք այդ երկրի ճակատազբին։ Բնականաբար իբրև պարկեշտ քաղաքա-  
ցիներ, կը պատկանինք այն ամբողջին որ այդ երկրին բնակչութիւնը կը կազ-  
մէ։ Այսուհանդերձ, մեր ինքնութիւնը բնորոշող և մեզ ուրիշ ու է ժողովուրդի  
մը զաւակէն տարբերող և յատկանշող առաքինութիւններ ունինք՝ անձեռն-  
միսելի, որոնց պահպանումը առօրեւականութենէ և առանին հոգերէ գերազանց-  
որէն վեր պէտք է ըլլայ յանուն զոյատեւման բարձր սկզբունքին, բնագդին,  
առհաւական ձայնին։

Արտասահմանեան և զաղութային մեր զոյավիճակը լայն նկատողութառ  
մը առջի չափազանց յուստութիւն է և արտում: Բայց այս արտամութեան վրայ  
բացուող ծիածաններ կան. ի վերջոյ մեր պանդխտութիւնը յաւերժացնելու  
նախասահմանուած ժողովուրդ մը չհնք, ինկած անողոք ճակատազրականու-  
թեան մը ճիրաններուն:

կրօք, յուսագրիչ երեւոյթներ չկա՞ն, որոնց կարենայինք սայլը, եւ հրօք, յուսագրիչ երեւոյթներ չկա՞ն, որոնց կարենայինք սայլը, եւ պարտիզանի մը խորունկ զոհունակութիւն պէս որ կը դիտէ մատաղ տուն-կերն ու սատերէն պայթող պտուկները:

պէս նաև ազգերու կեանքին մէջ պահեր կան իրենց ներքին աարագութեամբը շատ կարեւոր, երբեմն մեծ իրադարձութեանց սպասումովը յղի, և երբեմն ալ անհատներու ինչպէս նաև ազգերու ընդգրկելիք ուղին որոշադրող։ Այդպիսի պահեր եղերական վախճան մը կ'ունենան և անսրբազրելի հետևանք՝ երբ մարդեր կը պարպուին հաւատքէ, տեսիլլքէ և յօյոէ։ Մարդ կը փի ինք իր վրայ ու կը վերածուի խլեակի մը։ Ինչ որ անցեալին մէջ մեր ապաւէնն էր և փըրկութեան կղզին, այսօր հեռաւոր մշուշներու ետև կորսուած անսուած բարձունք մը չէ։

Ինչ որ երէկ մեր յարացոյցն էր ու մեր «ամէն բանէ վերը» այսօր նուազ առինքնող կը թուի ըլլալ մեր հաւատքէ տակաւ պարպուող երիտասարդ սերունդին հոգիին ու տեսիլլքէ հեռացող անոնց աչքերուն։

Կազմակերպչական ողիի պակաս մը։ Հակառակ յուսահատ մարդու մը վերջին ձիգերուն նմանող փորձերուն, զանազան մարզերու վրայ, զանազան իրականութիւններու մէջ կայ օրէ օր ծաւալ ստացող թերացում։ Զոհողութեան պակաս թարգմանեն շատեր թերկո՞ մտաբերելով երանելի այն օրերը երբ կային մարդիկ որոնք իրեն հրապարակախօս, խմբագիր կամ ազգային զործիչ իրենց անձերը կը մոռնային յանուն արդար մտասկեռութեան ու Յարատեւութեան պակաս՝ մտածեն շատեր որոնք զիտակցելով և ապրելով անփառունակ ներկայացին անդոնը կը զգան նահանջը մշակութային, ընկերային և զրական գետիններու վրայ։

Մեր նոր սերունդին ոչ - հայեցի գաստիարակութիւնը և օտար մշակոյթներու և բարքերու մեր մէջ հեղումը, հոգիներէն ներս կը յառաջացնէ իրերամարտ հոսանքներ և քառսային վիճակ. լարիւրինդոս։ Հոսկէ՝ իրար չհասկնալու ողբերգութիւնը։ Հոսկէ՝ նաև ուրիշ և նոր արժէքներու մեր պաշտամունքը։

Եւ սակայն պաշտամունքը Աստուծոյ վայել է միայն. Աստուծոյ. — զոր ճանցած ենք Հայաստանեայց Եկեղեցիին միջոցաւ, և որուն միջոցաւ զերազանցած ենք ինքզինքնիս քրիստոնէութեան սկզբի օրերէն ի վեր։

\* \* \*

Կ'ապրինք արագութեան և երկաթի, ների և արօմի դարուն մէջ. շատե՞ր տրտում համակրութեամբ մը կը նային զեղագիտական, մշակութային, և մանաւանդ ազգային հարցերու վրայ։ Տնտեսական տագնաւոլ մըն է որ ամէն բանէ աւելի և ամէն բանէ առաջ կը մտահողէ ամէն ոք։

Յարատեւութեան պակաս՝ թէ զոհողութեան ողիի նուազում։ Զկա՞ն անձնուրաց մարդեր այն հին և ոսկեղէն դարերու տիպարներուն նման առաքելատիպ, զաղափարապաշտ, սրբակրօն կամ մաղաղաթեայ դէմքերով որոնք մութ ժամանակներու վրայ իրենց արիւնը լոյսի շող ու ճառագայթ իրեն կ'երկարեն ու չեն մարիր սերունդներու յիշողութեան մէջ։

Կա՞ն սրտապնդիչ երեւոյթներ։

Կեանքը տիեզերքին մէջ, — բուսական կամ կենդանական — յարատեքայքայում և վերստին ստեղծում, կենսունակութիւն է։ Կան նահանջներ շատ



մը մարզերու վրայ, սակայն միւս կողմէ կրօնական — Ազգային տեսանկիւնէն դիտուած կան խանդապառ և վերանորոգ յայտագրումներ :

Տարակոյսէ վեր է որ մեր պատմութեան ամենէն դժբախտ ժամանակ-ներէն մէկուն մէջ է որ կ'ապրինք սփլուռք կոչուած, աշխարհի չորս ծագերուն վուուած մեր կոտորակուած հայրենակիցներով : Սակայն և այնպէս բարեբախտութիւնը ունինք կորսնցուցած շըլլալով մեր տոհմիկ առաքինութիւնները ուրոնք իրեւ ալապասթրէ խարիսխ չեն սասանիր, հիւսիսի վիչող հովերէն չեն ծոփր, նոյնիսկ հեռաւոր աշխարհազրական զօտիներու տակ ապրող մեր եղայրյաներուն և քոյրերուն ամուր հաւատաքը :

Մեծագոյն բարեբախտութիւնն է մեզի համար որ կը զգանք ու կը տըպաւութինք, կը հազորդուենք այն տաքուկ զգացումներուն, թարմութեան և շունչին որ կուզայ մեր ոզեկանութեան կեղրոնէն՝ Ա. Էջմիածնէն, Արարատեան դաշտէն, — Մայր Հայրենիքէն, իրեւ աղօթք, երգ, իրեւ խօսք և իրեւ աւիշ : Հայրենիքի զաղափարը հողին ձայնն է որ մեր արեան տրոփով ու կշույթով կը խօսի մենէ իւրաքանչիւրին ներսը : Անիկա «սկիզբն է մեր ուրախութեան» : Ճշմարիտ ուրախութիւն մըն է ամենուս համար որ չերմութեան ալիք մը կ'անցնի մեր տակաւ պազիլ սկսող հաւաքականութեանց մէջ : Նորօրինակ Էլիսուիր մը՝ որ կ'անցնի մեր երակներէն խառնուելու մեր արեան . . . :

Բարեբախտութիւնն է գարձեալ տեսնել որ զաղութներու և զանազան կեղրոններու մէջ նոր թափով և նոր կորովով յառաջ տարուին պատկառելի մարդոց կողմէ սկսուած մշակութային ձեռնարկներ, ուսումնարաններ և դրաբեկանքեր հասցնեն բազմակարօտ մեր ժողովուրդին նոր Հովիւներ : Ամէն հաստատութիւն կը յատկանշուի իր մարդերով . Հայստաննեայց Եկեղեցին այս օրերուն մանաւանդ պատուական եկեղեցականներու պէտք ունի, նոր արժէքներու սեւեռաբիր և տակաւ ճշմարիտ և բիւրեղացած արժէքներու հաւատքէն պարզուող տղոց ջամբելու համար մեզի հրիտակուած մեր անցեալին արժէքները անոնցմով լեցուած՝ նայելու համար ապագային :

Այս առնչութեամբ Ա. Էջմիածնի մէջ երանաշնորհ Տ. Տէրոդ Զ. վեհափառի ջանքերով վերաբացուած Թաղրեվանքէն արդէն կոկիկ փունչ մը կայ երիտասարդներու Ազգին ու Եկեղեցիին ծառայութեան համար նոր բացուած հողիներով :

Երուսաղէմի Ա. Յակոբեանց դարաւոր ժառանգաւորացը միշտ կը պահէ Ազգին վեղաբաւոր զինուորազրեալներ նուիրելու իր աղուոր աւանդութիւնը, և մանաւանդ այս օրերուն երը Ա. Երկրի քաղաքական հորիզոնէն չեն փարատած սկ ամպեր ու Ա. Աթոռը կ'ապրի իր նեղ օրերը :

Պատկառելի թիւ մը կը կազմեն Երուսաղէմի Ա. Յակոբեանց Միարանութեան այն անդամները, — ըլլան անոնք Հայց . Եկեղեցւոյ նուիրապետական բարձր դիրքերուն վրայ կամ պարզ վարդապետներ — որոնք կը զործեն մեր ժողովուրդին մէջ, զանազան կեղրոններու մէջ յանուն Հայց . Եկեղեցիին և Հայ ժողովուրդին :

Խոկ Մեծի Տանն Կիլիկիոյ Անթիլիկասի Դպրեվանքը ունի նկատառման արժանի թիւ մը աշակերտներու որոնք կը պատրաստուին ու կը պահուին բազում դժուարութեանց կուրծք տալով և զահողութիւններու առջև առանց կանգ

առնելու : Այս տարի առանց հաշուելու քահանայից դասարանը, արգէն ունին  
75 Դպրեվանքի ուսանողներ :

Խոկ Կ. Պոլսոյ Ա. Խաչ Դպրեվանքը որ բազմահմուտ, ծերունազարդ  
այլ անխոնչ Ամեն. Տ. Գարեգին Պատրիարքի չափերով սկսաւ երկու տարիներ  
առաջ, առանց արդիւնքէն առաջ հաստատութեան ըրած ըլլալու յաւակնութեան,  
կրնայ տեսակ մը շարունակութիւնը նկատուիլ երբեմնի Արմաշու Դպրեվանքին :

Մկիւտարի ծովահայեաց բարձունքին զեղեցիկ մէկ կէտին թառած Ա.  
Խաչ նորակառոյց Դպրեվանքը այժմ ունի 52 սաներ որոնք կը մեծնան և կը  
զօրանան Արմաշական շունչով մը և ովիտով : Թիւրքիոյ Հայերը, — աւելի քան  
75 հազար —, անհրաժեշտաբար պէտք ունին նոր և թարմ ուժերու : Մեր  
զրականութեան կեդրունը նկատուող զեղեցիկ Պոլիսէն այսօր զրեթէ ոչինչ կը  
մնայ եթէ չհաշուենք մատի վրայ համբուող և պատմէշնն վրայ մնալ յամառող  
մտաւորականները : Հակառակ թեքնիք գժուարութիւններու որոնք ոսէ դա-  
զութէ աւելի են հօն իրենց տարողութեամբ, Ա. Խաչ Դպրեվանքի դոյութիւնն  
ու յարատեւութիւնը կրնայ Ամեն. Տ. Գարեգին Պատրիարքի մէկ մեծազործու-  
թիւնը նկատուիլ : Մանաւանդ որ Պատրիարքարանը այժմ շունի երբեմնի հա-  
սոյթը իր անշարժ կալուածներուն :

Վերը յիշուող Հաստատութիւնները կը դոյատեւեն ու կը պտղաբերին  
չնորհիւ՝ սքանչելի մեր ժողովուրդին, անոր առատաձեռնութեան ու բացար-  
ձակ կարիք մը նկատուող, անյետաձգելի զործ մը կատարելու զիտակցութեան :  
Մեծազործութիւնները ամէն բանէ առաջ սիրոյ արարքներ են և սիրոյ յայ-  
տարարներ . մեր ժողովուրդը ունէ ժամանակի մէջ, ինչպէս նաև այսօր ունի  
իր Մայրենի եկեղեցին իրեն իր ամէն բանէ վերը :

Իրեն ազգային մշակոյթի, հայագիտութեան և տոհմիկ դաստիարակու-  
թեան վառարան, Դպրեվանքերէն ետք ունինք Հայ. Բարեգործական Ընդհա-  
նուր Միութեան վարժարանները : Կիլլորոսի մէջ Մելգոնեան Կրթական Հաս-  
տատութիւնը : Պէյրութի մէջ Յովակիմեան - Մանուկեան մանչերու, և Պարուհի-  
թակորեան աղջկանց զոյդ երկրորդական վարժարանները արդիական չէնքերով,  
որոնք իրապէս զոհողութիւններու զին եղող ճիզերու ուղիղ համեմատութեամբ  
արդիւնք կ'ունենան, ի փառս Հ. Բ. Բ. Միութեան և ի շահ ազգին, ու Հայ  
մշակոյթին :

Դարձեալ ազգային մշակոյթի պայծառացման և յառաջացման կեդրոն  
ունինք Պէյրութի և Հալէպի ձեմարանները որոնք մեր տրամութեան վրայ  
խինդի շողեր են : Պէյրութի Համազգային Ընկերութեան Փալանձեան ձեմա-  
րանը քառորդ դարու կեանք ունի արգէն ու անցեալ ամիս տօնեց իր հիմնար-  
կութեան 25-ամեակը . Հաստատութիւն մը՝ որ շինած է իրեն համար աւան-  
դութիւն մը . — ձեմարանական աւանդութիւն մը, չնորհիւ հիմնադիրներուն :  
Եւրաքանչիւր Հաստատութիւն եթէ կը յատկանշուի իր մարդերով, կը հիմ-  
նաւորուի սակայն աւանդութեամբ : Խնջու չենթադրել որ ատեն մը ետք Փա-  
լանձեան ձեմարանն ալ չըլլայ երբեմնի Պոլսոյ կեդրոնական, Պէրպէրեան կամ  
հեռաւոր Սանասարեան վարժարաններուն նման արդիւնաւոր և մեր մշակոյթին  
նուիրուած մարդերու բեմ : Անհրաժեշտութիւն մըն է Մայրենի հողը ազգի մը  
զաւակներուն իմացական ճիզերը պտղաբերելու համար լաւագոյն արդիւնքնե-

բով . Հայրենիքը ոյժ է և ախնամիզմ : Հո՞ն է որ որեէ տեղէ աւելի անհատ մը շունչ կ'առնէ ու կը ներշնչուի , կը հաղորդուի անցեալով , իր փառքերով , կ'աղրի իր բարքերով :

Գժրախսութիւնը որ ունինք այժմ հեռու ըլլալով Հայրենիքէն , մասամբ կը գարմանուի ժողովուրդի հոծ զանգուածին ներկայութեամբը : Պէջրութ և Հալէպ այս տեսակէտէն բախտաւոր կրնան համարուիլ :

Գեղեցիկ ճիգ մըն է Հալէպի Քառէն-Եփի ազգային երկսեռ ձեմարանը . Սիւրիոյ տափակութեան վրայ օվասիս մը եթէ կ'ուզէք որ քանի մը տարիէ ի վեր կուտայ բացառիկ յաջողութեամբ աշակերտներու խումբ մը , չնորհիւ փորձառու ուսուցիչներու խնամքին և հողածութեան : Յիշեալ ձեմարանը կարելիսութիւններ ունի ընդարձակուելու և աւելի արդիւնաւորուելու :

Երուսաղէմ ալ իր Ս. Թարգմանչաց երկսեռ վարժարանով Ս. Յակոբեանց Առաքելական Ս. Աթոռին հովանիին ներքեւ անցնող քսանհինդամեակին պատրաստած է ինք իր մէջ կոկիկ և մեր Եկեղեցոյ սիրով լեցուած սերունդ մը : Հակառակ քաղաքական պայմաններուն Թարգմանչաց վարժարան՝ երկրորդական վարժարաններու մակարդակին բարձրացուած է :

Այս բոլորը անշուշտ կարելի կ'ըլլան , անզամ մը եւս շեշտելով , մեր ժողովուրդին զնահատանքովն ու արժեւորելովը իր մշակոյթն ու իր ոսկեզնիկ գերբառու : Վարժարանները մեր զաղութային կեանքին մէջ սրտապնդիչ երեսոյթներ կրնան նկատուիլ մեր այսօրէն դէպի մեր վաղը երկարաձգուած և կամբջուած :

Այս մտահոգութիւնը մի միայն Մերձաւոր Արեւելքի մէջ պէտք չէ սահմանափակուի : Ժամանակ է որ Ա.մերկաններն ալ շարժին ու անկարելին կարելի գերածածենք մարդկայնօրէն և ազգայնօրէն կարելի չափերով : Սակայն կրօնականացնենք մարդկայնօրէն և ազգայնօրէն կարելի չափերով : Սակայն կրօնական դաստիարակութեամբ սնած և Մայրենի Եկեղեցիին սիրովը լեցուն մտաւուկան ինչպէս զիտցած ենք միշտ գժբախտ օրերուն մեր պատմութեան :

Ճիշդ է որ մտաւորականներ ունենալու մեր բաղձանքը տակաւ կ'իրականացնենք մարդկայնօրէն և ազգայնօրէն կարելի չափերով : Սակայն կրօնական դաստիարակութեամբ սնած և Եկեղեցիին սիրովը լեցուն մտաւուկան ինչպէս զիտցած ենք միշտ գժբախտ օրերուն միշտ գժբախտ օրերուն մեր 8իրով Յիսուս - Քրիստոսէ :

Ինք էր որ երջանիկ օր մը Արարատեան դաշտին մէջ ոսկի ուռնակով մը թակեց զետինը և սարսեց սանդարամեալ ու մատնացոյց ըրաւ իր Եկեղեցիին վայրը . . . Ս. Էջմիածին . . .

Ուրեմն Միածնաէջ Ս. Եկեղեցիին և մեր ողեկանութեան , հաւատքին ու աղքիւրը եղող Հաստատութեան սիրովը լեցուն մտաւորականներ կ'ուակին ու աղքիւրը Եղող Հաստատութեան սիրովը լեցուն մտաւուկան աղքիւրը որ ըլլան անհաշուելի զոհողութիւններով պատրաստուող մատաղ հողիւրը որ ըլլան անհաշուելի զոյտաւել և ըլլալ արդիւնառատ քառսային և ները , որպէսզի կարենանք զոյտաւել և ըլլալ արդիւնառատ քառսային շոտրատում օրերէն անցնելով փառաւոր ապազայի մը որուն արշալուսային շոտրատում օրերէն հովերէն պազած մեր մարմիններուն չերմութիւն մը զերը օտար երկիրներու հովերէն պազած մեր մարմիններուն չերմութիւն մը կուտան իբրև աղօթք , երգ ու զրականութիւն :

Զ. Վ. Զ.

ԿՐՈՆԱԿԱՆ

## ՆԵՐԵԼԻ ԵՒ ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԵՐ

Ներումը ինքնինքնէ՝ այսինքն  
կատարուած զօդէն կու զայ, և  
ոչ երբեք դուրսէն . . . :

— Երէցու, մեզին և անոր քողութեան  
մասին մեր «խոհք-խօսքի բուռն» մէջ կար-  
ծեմ մոոցանք շօշափել ներելի և աններելի  
մեզերը, որոնք Յիսուս անուանեց և Ա.  
Հոգւոյն դէմ հայկոյութիւնու Այսօր կ'ու-  
գէի՞ք որ խօսինք անոնց վրայօք:

— Սիրով, Հոգի՝ . . . Բայց նախըսէ  
թէ ի՞նչ կը հասկնառ ներելի մեղք ըստով:

— Ալյսինքն, Երեցո, այն մեղեւրը, որ  
ըլլալէ յետոյ մեր կատարելի՝ բայց զանց  
առնուած պարտականութիւնները, մեր զի-  
տակցաբար կամ անգիտակցաբար գործած  
յանցանքները, ունեցած մեծ ու պայտիկ  
վրիփումները, զանազան թերացումներն են  
որոնք կը չնորհուիին մեզ այն պայմաննե-  
րով որոնց մասին խօսեցանք և որոնցմէ  
ազատ կ'արձակուին խօսուզգանահօր միջո-  
ցաւ, որ մեզ մտիկ կ'ընէ, կը լսէ մեր մեղ-  
քերը և խրատելէ ու շատ շատ ռապաշխա-  
րութեան և ենթարկելէ վերջ՝ կ'արձակի-  
զմբեց Եւ կ'ըսէ երբեմն, «զնա՞ւ և այլես  
մի՛ մեղանչեր»:

— Հոգի՛, աւելի ճիշգը ըսէ՞ մենք կը  
գիտենք մեր պարտերը, զարելով բան մը  
մեր սիրտէն և մեր հոգիէն։ Այո՛, մենք  
ենք որ կը քաւե՛նք կամ կը սրբենք մեր  
մեղքերը և կը քաւենք զիղջ-արցունքով։  
Եւ աւելին՝ կը դարմանենք զանոնք փո-  
խարէն բանէ մը զրկուելով կամովին։ և  
զրկուելով՝ աւելի՛ արծէք քաւոր բանէ մը՝  
քան մեր ստացածը կամ սանալ կարձածը  
մեղանչելով կամ զանցելով՝ մեզի զայն  
արգիլող օրէնքը։ Առանց այս դարմանու-  
մին որ կրնայ ըլլալ — պարտի՛ ըլլալ —  
գերազանցօրէն աւելի և բարձր, ապա-  
խարութեան խորհուրդը կը մնայ թերի և  
մեր զացած կոկիծը և թափած արցունքը  
ապարդիւն։

Այս խմանողի՝ Շերելիի կը համարուին

և կը ներուին խսկ — կայ բան մը արդեօք  
որ մնայ անհետ և անկօրուստ — այն յան-  
ցանքները, որոնք չար վայրկեանի մը մէջ  
մեր թուլացած բնութեան շեզումները կամ  
անկումներն են, որոնց սակայն՝ պարտաւոր  
կը մնանք, իբրև բանական կամ կրօնական  
էակներ՝ նակազմիլ, առողջ մնացած և ար-  
թընցած մեր խելքովը և մեր խիդ ճովը և  
անոնցմէ խթանուած մեր կամքովը՝ Անա-  
ռակ Որդին, կենդանի և պիրճախօս օրի-  
նակն է մեր այս գատումնին։ Ան, զես չը  
մթագնած իր խելքով՝ բոլորովին չկորսուած  
իր արժանապատութեան զգացումով և  
բալորովին չմարած իր բարոյական զիտակ-  
ցութիւնով է որ գտաւ ինքիննիր իր ան-  
կումի փոսին մէջ, ուր խթանուած խայ-  
թովը խզճին, ոտքի կեցաւ՝ և ուրկէ թե-  
առած զես անմեռ մնացած որդիական սի-  
րոյ և գտահութեան զգացումով, զարձաւ  
հօրենական տռնը և անկեզծ ու խոր զըդ-  
ջումի սրտապատառ աղաղակաւ, ներկայա-  
ցաւ զթուու ու զուրգուրուտ զիրկը իր աղնիւ-  
և ներու հօր՝ և արժանացաւ թողութեան։  
Այս՝ Հոգի՛, ան կը մնայ տիպար օրինակը,  
իր խսկ անաղարտ մնացած սիրոսով ու կամ-  
քով, մեղքերուն սե ու կեցաւու պատահ-  
քէն զուրու եկած և նոր կեանքին մէջ զի-  
րածնած հոգիի և կ'ողջունուի, հզօր սիրով  
մը զինք ողջագուրող ողորմած և զթած  
իր հօր։

Հիմա, Հոգի՛, զիս լսելէ վերջ կ. ի տես  
անսառակ որդիին և հօրը զմայլելի օրինա-  
կին, ըստ՝ մեղքերուն թողութիւնը կը  
չնորհուի թէ կը ստացուի . . . .

— Երեցս բարի՛, թէ՛ մին և թէ միւս  
պարագան նշմարիտ կը տեսնեմ ձեր տուած  
բացատրութեան լոյսովը զատելով։ Դուն  
բոէ՛ Երեցս, և սորդիմ . . . .

— Այս, Հազեա՞կ, թէ՞ մին և թէ՞ միւսը,  
բայց վկարուած զինով մը ստացուած թո-  
գութիւնը աւելի փրկարար և մխիթարար  
է քան նուիրուած կամ ընորհ բաւուրիւ-  
նը . . . :

Հիմա զանք ու անհերթիլիք կոչուած մելքինուն, սուսնց մասին կ'ուզես իս կարծիքութանալ:

Հոգի՛, ինչպէս որ կան անբռնելի  
յայտարարուած ցաւեր և ախտեր, և այն  
հաեւառահ պատճենոց սժիշենեառուն բարի

կամեցալութեան և ճարտար խնամքներուն և նոյնիսկ հիւանդներուն փափաքներուն և ջանքերուն, այնպէս ալ կան աններելի մեղեմ կամ յանցանեներ.

Այս՝ անբուժելի է ախտը՝ երբ այլք մաշած կամ մեռած ֆիզիքական բնութիւնը կենսաւորող հիւանդին քիչները, կամ խափանուած, գագրած են մարմինը լարող կենսական օրէնքները։ Ահա այդ մաշումն ու խանգարումն են որ չունին դարման, չունին բարասան, չունին զեղ և բոյժ, գլխմեր գիտութեան ներկայ վիճակներով . . . :

Այդպէս է նաև, Հոգի՛, հոգեկան ու բարոյական մարզին մէջ՝ երբ միտքը ծռած՝ սեւը կը տեսնէ իրք ներմակ, առը կ'ընտըրէ իրք իրաւ. խաւարը կը սիրէ իրք լոյս՝ և այն, այս՝ կործանուած է այդ հոգեսոր աշխարհը։ Բակուած կործանուած է կառոյցը կ'ըսիմ, ափսո՞ս այդ մտքին, և փլած ու գատողութեան կշխոը խանգարուած է, ոչկա՞յ յոյս . . . Այս ատեն, Հոգի՛, մարդիկ ճշմարտութեան գէմ կը գաււեն, սրբութիւնը կ'անարգին, անմեղութիւնը կ'ապականին, խիզճը լուեցած՝ կիրքերու ձայնով կը խօսին, սիրտը կուրցուցած՝ չարիք կը զործեն և վիրջապէս, Հոգի՛, Աստուածը ուրացած՝ Սատանը կը պաշտեն . . . Անոնք, աւազ, այսպէս զըլիսովին կործանուած, մեռած են՝ անյօյ յարութեան և անմահութեան . . . :

Այս բացատրութիւններէն Հոգի՛, պարզ կ'երեսի թէ միայն ոսք ունեցող եւ կանգնիլ ուզողը կրնայ ոտքի ելլել։ Ոտք չունեցող և կանգնիլ չուզողը ի՞նչպէս ելլէ, ինչո՞ւ ելլէ և ի՞նչպէս քալէ . . . Այդպէս է իմաստն ու պարագան աններելի մեղերուն և անոնցմով մեղաւոր մարդերուն։ Արսի պէս պայծառ ճշմարտութիւնը տեսնել չուզող կամ տեսնելէ վերջ ուրացողը, իր խոկ ձեռքով ու կամովին կուրացած, իթէ ուզէ խոկ՝ ոչ ոք կրնայ զայն բուժել։ Անբուժելի է իր ախտը, կարճ խօսքով՝ աններելի է իր յանցաները։ Կ'արժանանայ բուժումի կամ ներողութեան՝ երբ տեսած ներմակին՝ ներմակ, սեին՝ սև, ճշմարիտին՝ ճշմարիտ և սուտին՝ սուտ կ'ըսէ։ Այս՝ Հոգի՛, կամաւոր կոյրին, խուլին, համբին՝ չիայ բժիշկութիւն. և բաէ՛, ի՞նչո՞ւ և ի՞նչպէս ըլլայ կուրին. և բաէ՛, ի՞նչո՞ւ և արդարը հաւածելն ու խաչելը . . . Ասուած և բնուրին չեն կրնար զոր-

ծել իրենք իրենց դէմ։ Ամէն ինչ օրէնքով եղած է և կը մնայ, ոչի՞նչ քմայքով։ Անարժանին համար հրաշքը — եթէ խոկ կարելի ըլլար — հմայէ է, և մենք հմայի կը նկատենք անբարոյական։ Երբ կ'ըսէն և Աստուած չի ներերո — մեղած՝ որ փաստաբանն ըլլանք Անձանօթին զոր կը դաւանինք Աստուած՝ պէտք է հասկնալ. — և Աստուած ինքնինքին դէմ չի զործեր. Ան համակ ճշմարտութիւն, անկեղծութիւն, լոյս, բարութիւն, սէր, և արդարութիւն՝ չի՛ կը նար մաս և բաժին ունենալ, զիտակից ստուգութենէն, խաւարէն, չարութենէն, ատելութենէն և անբաւառութենէն . . . .

Այս՝ Հոգի՛, Աստուածոյ, իր Որդւոյն և Ս. Հոգւոյն դէմ — սրոնք՝ գերազոյն և բացարձակ ճշմարտութիւն, սէր, բարութիւն և արդարութիւն են — կամաւոր յանցանք, անզիղջ կուրութիւն, ուրացում և գաւաճանութիւն, աններելի մեղեմ են. մեղեմ՝ զորս Ս. Գիրքը կը կոչէ «Ս. Հոգւոյն դէմ հայհոյութիւն»։

— Երէ՛ցս, արդա՞ր է դատաստանը Յիսուսին, երբ կը վճռէ թէ աններելի է մեղը երբ զործուած է Աստուածոյ, Որդւոյն և Ս. Հոգւոյն դէմ, այսինքն՝ երբ կուրացում կամ ուրացում կայ մէկին կամ բացարձակ ճշմարտութեան դէմ։ Եւ ինչքան անտառակելի է այդ արդար դատաստանը և իրաւ այդ վճռը, ձեր զմայլելի դիտողութեամբ թէ պատն ու դատողութիւնը բնական արդիւնքն են զործուած արարքին և ո՞չ վիրով՝ դատող դատաւորին։ Աւելի պարզ խօսելով՝ եներին արդարութիւն կամ անոնց էութիւնն իսկ կազմող օրէնքներուն ուրացումը, կարծես թէ ենթական կը նետէ — ինքնասպան շարժում — անոնց ճգմող ճնշումին տակ և ո՞չ թէ արտաքին և օտար ձեռք մը. Ուրիշ իմաստ կրնայ ունենալ տեսնել՝ և չտեսնելը, լոել ու չլսելը, ճշմարտութիւնը ըմբռնել՝ և ուրանալը, սրբութիւնները գիտակցարար բըռնարարիւլը, բարին ատելը, անմեղը զրպարտելը և արդարը հաւածելն ու խաչելը . . . Զէ՞ք կարծեր թէ խորապէս յիմար և յամառ, հիմնապէս չար և անիրաւ, յուսահատորէն անտառակ և անզգաստ, բա՛ց աշ-

քերով կոյր այդ մարդերը, թշուառագո՞յն են քան սովորական թշուառները, ուստի՝ անսնք արժանի չե՞ն եթէ ո՛չ մեր սիրոյն՝ բայց գէթ գութին, արժանի՝ հասկցուելու եւ ներուելու՝ քան թէ անողորժաբար զատապարտուելու . . . :

Ո՞հ, բարի երէ՛ցս, պիտի խնդրէի որ սոյն զիտողութիւնն նկատէիք ո՛չ իրրե առարկութիւնն և ո՛չ իրրե զիտողութիւնն վճիռին, մանաւանդ աստուածային, որուն ճշմարտութիւնը և արդարութիւնը հաստատեցի և ընդունեցի: Բայց երէ՛ցս, զիս կը մզեն խօսելու ո՛չ ոզին հակածառութեան և ո՛չ շաղփառփութիւնը, այլ անհուն սէրը մարդկութիւնն, որ կ'ուզէ խորհիլ և փորձել անկարելին խոկ, բուժելու համար անբուժելին և փրկելու համար անփրկելին. կ'ուզեմ, կ'ըսեմ՝ ես ալ, փրկել զամէնքը, որովհետեւ մարդ եմ՝ և մարդկութեան հազորդ, Հոգի՝ եմ՝ և հոգւոյս կցորդ են բոլոր մարդիկ իրրե քոյրե՛ր, եղբայրներ Աստուծոյ մէջ: Անոնց կորուսոը կ'այրէ՛, կը մրրիկէ՛ զիս: Եւ յետոյ՝ սորգած եմ, յանուն Յիսուսի խոկ, ձեր կողմէն աւանդուած հաւատքի գասերէն թէ և Յիսուս եկած է փրկելու և ո՛չ թէ կորսնցնելու. Եկած է կեանք տալու՝ և ո՛չ թէ մահացնելու: Ու սորգած եմ նաև թէ ամենակարող և ամենողորմ Աստուծոյ համար ոչի՞նչ կայ անհնարին: Այսո՛, չնորհիւ իր Որդույն՝ փակ աչքերը բացուած են և կը բացուին. անառակները զգաստացած են և կրնան զգաստանալ. կորսուածները փըրկուած են և կրնան փրկուիլ: Ուստի, երէ՛ցս, չե՞ս խորհիր և չե՞ս կարծեր թէ անհաւաները կրնան հաւատացեալ գառնալ և մահացու մելիերն ալ կրնան ներուիլ և ո՛վ որ Աստուծոյ որդի է՝ չի մահանար, չի կորսուիր . . . խօսէ՛, երէ՛ցս, քաջալերէ՛, սփափի՛, ոզիացո՞ւր զիս . . . :

— Հոգի՛, ես խօսեցայ կարդացածէս, բացարեցիր իմ պաշտելի Ս. Գիրքէս ու չափեցի՝ չափովը խող նու կշխովը, ո՛հ, միշտ տկար՝ մտածումիս . . . :

Դուն, Հոգի՛, ո՛չ կոչումէ, ո՛չ Ս. Գիրքէ և ո՛չ ալ միշտ-մտածումէ՝ այլ կը խօսիս անկախ մոքէ, կը խօսիս թթիս առած սիրտէ՛, սէրէ՛, ուրիշ խօսքով՝ կը խօսիս ներշնչուած անհնողորմ Զօր Աստուծ-

մէ . . . : Ուստի, Հոգի՛, արդարամիտ ես քան զիս և իրաւո՛ւնք ունիս երբ կ'ըսես թէ Ան երբ ուզէ՝ իրեն համար անհնարին ոչինչ կայ, Ան կը ներէ՛ թէ իսկ մեղքերն են աններելի . . . :

Բացի ատկէ, եթէ բնութիւնը, միտքը ունին իրենց օրկենքները, օրկեն ունի նաև սիրը որ գերիգերէ և անսնցմէ. ա՞ն է մանաւանդ իր մաքրութեան մէջ Աստուած ցուցնող և աստուածացնող զործարնը . . . :

Բայց, Հոգի՛, անով մէկ կտեղ, թողո՞ւնք որ Աստուած կատարէ, ինչ որ իր խորհուրդը և կամքն է մեզ՝ մարդկուու անմատչելի, և խօսինք ինչ որ իր թելազրութիւնն է մեր մտքին և մեր խող ճին, որոնք ապահովապէս արդար լոյս և աստուածային ձայնն են մեր մէջ յաւանուած:

Այսո՛, Հոգի՛, երբ մենք ճշմարիտը կը խորհինք ու կը խօսինք, երբ արդարը և ուղիղը կ'ուզենք և կը գատենք, մեր միջոցաւ՝ Ան կը խորհի, կը գատէ, կ'ուզէ և կը խօսի: Մեր բանէն գերիգեր և մեզ համար անլոյծ եղած խորհուրդներ և օրէնքներ կան անչուշտ, որոնց ազգումը վը թերեւս մեր սիրտը կը զգայ, մեր սէրը կը բաղձայ, որպէսզի լուն օրէն եւ արդարութիւն ու խօսի և զործէ ոլորմաւրիւնը Ասուծոյ՝ զիրագոյն արդարութեան սիրայն . . . : Բայց մենք, Հոգի՛, պարտաւոր ենք միալ հունին մէջ՝ հունաւոր մեր բնութեան ու բանականութեան, կոթնելով մանաւանդ Յիսուսի խօսքերուն, Ս. Գրքի հրահանգներուն և մեր գաւանանքի սկզբունքներուն, յիշելով երբեմն թէ և Ալրդարոց ո՛չ զոն օրէնք: Եւ ո՛վ է տիպարը արդարութեան, եթէ ոչ Աստուած միայն . . . :

Հոգի՛, եկո՞ւր ուրեմն որբենք մեր տկարութեան արցունքները և հարցնենք. — ի՞նչ կ'ըսեն մեր բանական բնութիւնը և մեր բարոյականը.

Անոնք կ'ըսեն նախ, թէ արդարութիւնը պէտք է ի զործ զրուի. պէտք է՝ չար պատուի . . . : Աւելի ճիշդ, ինչ պէս մենք կանխաւ բացարեցինք՝ Զարը կը պատուի . . . :

Երկորորդ՝ ձայնողին կը պատասխանաւի. զիմոզը՝ կը զիմաւորուի, երկարող ձեռքը՝ կը բռնուի, ուղողին կը տրուի և այդպէս ալ՝ զզացողին կը ներուի, և հա-

կառակ իր կամքին ու ջանքին՝ ո՛չ ոքին  
կը տրուի . . . .

Եթէ ճիշգ և ճշմարիտ են առանք, Հա-  
զի, աններելի մեղին ամբոջն իսկ կը ներ-  
ռի՝ եթէ զգջալ, եթէ դառնալ ու նեսուի  
պիրին իր հօր կամ եղբօր: Կը զրկուի, կը  
համբուրուի, կ'որդեզրուի վերսախն, եթէ  
ան բանայ իր հոգւոյն ալքերը և զգայա-  
րանքները բօլոր՝ տեսնելու և զգալու, սի-  
րելու և ապրելու համար հոգեսոր ու բա-  
նաւոր ճշմարտութիւնները, մէկ խօսքով  
կը փրկուի անիկա ալ . . . . Իսկ եթէ աննե-  
րելի մեղին հեղինակը իր խորհուրդով,  
զգացուժով, կամքով ու կեանքով զուրս  
կուցայ մարդկուրենին, խսպա կը կորսցնէ  
կամ կորսնցուցած է մարդու ընորդի, և իր  
ձեռքով իսկ այլսու խզած է որդեզրութեան  
կապը Հօր Աստուծմէն, նովին գործով խը-  
զած է նաև կապը եղբայրութեան քեզի  
հետ և ամենուն հետ: Բա՛, Հոգի՛, ճիշգ  
չէ ուրեմն որ անիկա այլսու մարդ չէ և  
մաս չի կազմեր քու մարդկութեանդ և  
հետեաբար այլսու նոզի չէ՝ կցորդ քու հոգ-  
ովի և նման անբան անասուններու, յե-  
տայնու չի կրնար քեզ ներչնչել մարդու  
սէր, գութ, կարեկցութիւն, օրոնց անու-  
նով կը յուզուիս, կը խօսիս և կը պահան-  
ջես արդարութիւն կամ ողորմութիւն . . .  
Ո՛չ, Հոգի՛, այլպիսի անբարժանին հետ ըլ-  
լալ ու մեալ ո՛չ միայն անկարելի՝ այլ նաև  
մեղի է . . . աններելի: Կամ անոր հետ կամ Աստուծոյ, չկայ միջին համբայ . . . : Չարին  
և նոյնիսկ անուղղայ չարագործին համար  
խորհիլ, աղօթել անոր զարձին համար աշ-  
խատիլ, մամտալ, նոյնիսկ կարելի զոհո-  
զութիւններն յանձն առնել լաւ, ա՛յդ կը  
հասկնամ, աւելին սակայն՝ ունա՞յն է և ի  
չարէն . . . Այս՛, պահէ զութդ անոր հա-  
մար. աւազէ՝ նոյնիսկ իր արդար կորուսը  
և այլքան: Ան չգարձաւ քեզի և իր Աս-  
տուծոյն, գուն այլսու հեռացած իրմէ,  
դարձի՛ր անոնց՝ որոնք պէտք ունին սի-  
րոյդ, զութիդ, զուրգուրանքիդ և լոյսիդ:  
կատարելու համար փրկութիւնն իրենց՝ ո-  
րուն կը ցանկան և որուն համար մանա-  
ւանդ պատրաստ են ամէն զոհոզութեան . . .  
Իսկ իր անձէն և ապա քենէ կամաւ լըք-  
ուածմ մեղաւորին հոգը ձգէ՛ Աստուծոյ, եթէ  
կամենայ՝ կը փրկէ զայն և կրնայ փրկել

### ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

«Ոչ զայ արքայութիւնն Աստուծոյ խորածու,  
իւ շասցեն թէ անաւասիկ աս է կամ անդ,  
զի ան արքայութիւնն Աստուծոյ իւ ներս ի  
ձեզ է»: (ՂՈՒԿ. ԺԷ. 20-21)

Յիսուս՝ Երուսաղէմի և Գալիլիոյ մէջ  
իր ուսուցումներու ընթացքին զերահասու  
կ'ըլլար այն մտայնութեան որ ընդհանրա-  
պէս կը տիրէր ժազովուրդին մէջ: Իր քու-  
րոզած թագաւորութիւնը բոլորովին տար-  
սեր էր այն հասկացողութենէն զոր հրեա-  
ները ունէին: Երկար ատեն տիրապետուած  
ըլլալով Հռովմէական կայորութենէն, ա-  
կընդէտ կը սպասէին Մեսիայի մը գալուս-  
տին որպէսզի ազատազրէր և Եհովայի ըն-  
տրեալ ժողովուրզը գերութենէ, համաձայն  
մարդարէներու զուշակութեան: Յիսուսի  
համար սակայն իր թագաւորութիւնը ժա-  
մանակաւոր ու այս աշխարհինը չէր: Աչ  
ոք զինքը շրջապատող ամբոխէն կը հաս-  
կընար իր Աստուծութիւնը, իր առաքե-  
լութիւնը և իսրայէլը փրկելու իր գալուստը:  
Հետեաբար, Անոր խօսքերը ակնկալուած  
Մեսիային գալուստեան յայոը կը չքացնէին,  
և բացուածք մը կը գոյանար Յիսուսի և  
ժողովուրդի զանգուածին մէջն: Հրեաները  
իրենց դարերու յայոն իրականացումը ու-  
ղած էին առնենել Յիսուսի մէջ: պահ մը  
օրօրուած էին ապագայի հեռանկարներով՝  
ապա՝ թշնամացած Անոր հետ: վասնզի Ան  
կ'ըսէր. — «Անդրեցէք նախ զարքայութիւնն  
Աստուծոյ և այդ ամենայն յաւելցի՝ ձեզ»:  
Արքան ընդարձակուէր Յիսուսի զործունէ-  
ութեան գաշտը այնքան աւելի անհրաժեշտ  
կը գառնար իրեն աշխատակիցներ և աշ-  
կերտներ ունենալ: Իր չուրջ հաւաքուած  
էին խումբ մը երիտասարդներ որոնց ուղ-

վերսաեղելով իրրն նոր արարած:

Այս՛, Հոգի՛, զերի սրտիդ և մեծ սի-  
րոյդ, մի՛ կամենար ինչ որ զէմ է օրէնքի,  
մտքի և զատողութեան, ինչ որ զէմ է  
նոյնինքն Աստուծոյ կամքին . . . .

ՀԱՅԿԱԶՈՒԻՆ Ա. ՔՃՆՅ. ԱՍԿԵՐԻՉԵԱՆ  
(ԵՐԵՎԱՆՍԱՑՈՒՄ)

զամուռթեան և պարզամտութեան վստահութիւնը ունէր։ Պարզ ձկնորսներ էին անոնք, Գալիլիոյ լճակին եղերքը անցուցած իրենց մանկութիւնը, բայց հաւատաւոր, անոնցմէ իւրաքանչիւրը հետագային, Տիրոջ Յարութենէն վերջ, պիտի քարոզէր յաւիտենական թագաւորութիւնը հեթանոս երկիրներու մէջ։

Հաւանական անպատեհութեանց և թիւրիմացութեանց առաջքը առնելու համար, Յիսուս կը քարոզէր առակներով, և աւելի վերջ կը բացատրէր իր աշակերտներուն։

Առակներէն առաջինը Աերմանացանիննէ զոր Մարկոս Աւետարանիչ կը ներկայացնէ իր առինքնող ոճով։ «Թարձեալ սկսաւ ուսուցանել առ ժողեղերըն, և խռնեցան ըզնովաւ ժողովուրդք բազումք, մինչև ինու մտանել նմա և նստել ի ծովուն, և ամենայն ժողովուրդքն զծովեցերն զցամաքն ունէին. և ուսուցանէր զնոսա առակօք բազումք ինչ։» Աւետարանիչին քնարական ոճին ետեւէն զիւրին է երեակայել Յիսուսի պատկիրը որ ամրող հմայք և սէր, կեցած իր աշակերտներէն մէկուն ձկնորսի մտկոյկին մէջ, պատմունանը թրթուուն երեկոյեան հովին, կը բացատրէ՝ հրեաներու կեանքին ա՛յնքան մօտիկ հոգագործին սերմանացանը։

Յիսուսի Ցնօրինական գործունէութենէն և քարոզչութենէն քիչ առաջ արդէն Յովհաննէս Մկրտչի նախակարապետը կ'ըլւար երկնքի թագաւորութեան, երբ կը մէէր ժողովուրդք ապաշխարելու, վասնզի կ'ըսէր ան «Մերձեալ է արքայութիւնն Աստուծոյ»։

Յիսուս կը սերմանէ, ու սերմերը կ'իյնան հոգիներու մէջ։ Ումանց մէջ կ'աճին, բայց անոնք իրենց անձերը նուիրուծ են ա՛յս աշխարհին, չեն կրնար բաժնուիլ անիէ որդեգրուելու համար երկնքի թագաւորութեան, միայն ձգուումը ունին արդար ըլլալու։ Կարծքացած զետին մըն է անոնց հոգին, աշխարհի հետ իրենց շփումէն. անընդունակ են մտնելու աստուծային խորհուրդին մէջ։ Ուրիշներ, այնքան նման մեր օրերու մարգոց, ընդունելով ճշմարտութիւնը, կը խանգամառուին ու պահ մը ետք կը մոռնան, ա՛յնքան արագ՝ որքան բարձրացած էր զիւրինք հրաժառապ խանգամառութիւնը։ Թէև ըստ երկույթին լաւ տրա-

մադրոււած են, բայց չեն կրնար յարատեել և սերմերը աճեցնել։ Աւետարանական բացատրութեամբ, չորցած զետինէ մը ետք կը նմանին քարքարուած զաշտի մը, որուն հողը թէև առատութեան խոստում մըն է հոգագործին, սակայն զործնականապէս չարգարացներ իր վրայ զրուած յոյսը։ Անհանգարտ միտքերն են անոնք, նորութիւններու հետամուտ. ուրախութեամբ կը լոին քարոզը, բայց կը մոռնան կամաւ, երբ զժուարութիւններու հանզիպին։ Բայց ո՞ր զեղեցկութիւնը — հոգեկան կամ բարյական կամ այլ — ձեռք կը բերուի առանց ժժուարութեան։ Կան ալ ոմանք ուրոնց մտքին մէջ բնաւ չի մտներ քարոզութիւնը, սերմերը ճամբռուն վրայ կը մնան ու թուշունները կը կացահարեն, կը տանին։ Աերմերը կ'իյնան թերես փուշով ծածկուած տեղի մը մէջ։ Հատիկները կը խեղզուին հոն՝ քանզի «ոչ զոյր հիւթ երկրին», կ'ըսէ Աւետարանիչը։ Աշխարհի հոգերն ու ցանկութիւնները, յոսի զգացումներն ու միտումները, փուշերը կը խեղզեն ու կը սպաննեն ամէն լուրջ ջանք և ամէն ճիզ։ Այնքան մակերեսային են երեմն մարզիկ, փոքրոզի և սնափառ, երկրային շահերումէջ ամրող զապէս կլանուած որ կը քչուին կ'երթան կեանքի յորձանուատին, իմա՞ կը խեղզուին։ Այսպէս կը յառաջանայ յաճախ ողբերգական տամբը շատ մը մարգոց կեանքին։ Յաւրահնական կեանքի և անանց թագաւորութեան մը սերմերը լիւրուոն կը նետուին անոնց մտքերուն և հոգիներուն զաշտին՝ հաւատարապէս, բայց անոնք չեն ըմբռներ, չեն ուզեր ըմբռնելու, յամտելով հեշտ կեանքի մը ցոփութիւններուն մէջ մնալ։ Այսպէսով հասկնալի կ'ըլլայ Քրիստոսի յատկանշական խօսքերէն մին. — «Բազում են կոչեցեալք և սակաւ ընտրեալք»։ Քիշերու սրտին մէջ պիտի իյնան Տիրոջ խօսքերը, ու անոնք ընտրեալները պիտի ըլլան, ժառանգորդները յաւիտենական թագաւորութեան։ Աշակերտները հաւատարմօրէն պիտի աճեցնէին սերմերը, բաշխելու համար բոլորին։

Հրեաները ոչինչ կը հասկնային Աերմանացանին առակէն։ Դատաւորներէն մինչեւ Հառվմէտական տիրապետութիւն, ճնապէս զերութեան և ազատութեան մէջ ապրած, անոնք պիտի ուզէին որ Յիսուս խօ-

սէր իրենց երկրային թագաւորութեան մասին . յեղափօխական մը ըլլար, Բարարբար մը ըլլար, որուն նախընտրեցին հետազային, աղատազրելով զայն և խաչելով զինք:

Գաղափարներու տեղաւորումը և առումը մեր մէջ, կախումը ունի այն ընկալչութենէն որ մեր մտքին է: Յիսուս թէն կը սիրէր ամբողջ մարդկութիւնը, առկայն իր աշակերտներն էին միայն որ մօտ ըլլալով իրենց Տիրոջ Անձին կրնային իմանալ Անոր առակներուն մեկնութիւնը: Անհրաժեշտարար պատկերաւոր բացատրութիւններով պիտի քարոզէր Յիսուս երկրաքարչ և անտաշ ժողովուրդին և ամբոխին՝ որպէսզի կարող ըլլային իմանալ: Վարդապետութեան մը սկզբունքները իրեն ընդհանուր և վերացական բացատրութիւններ դիւրըմբունելի չեն ժողովուրդի զանգուածէն: Կարեոր է որ անհնք ըլլան մասնաւոր և թանձրացեալ պատկերներ, երբեմ սովորական կեանքէ առնուած, հասկցուելու և ըմբռնուելու համար: Ասոր համար առակներու պատմումէն ետք կը յաւելուր Անր ունիցի ականջս լսելոյ լուրիցէ ։ Յիսուս կը մեկնէր առակներուն իմաստը իր աշակերտներուն, կը նախընտրէր անոնց մէջ աճեցնել բարւոք սերմեր, որպէսզի անոնք ատոքանային, որպէսզի կարող ըլլային ուսուցանել հանուր մարդկութեան, որուն համար այնքան սէր ունեցաւ որ չի վարանեցաւ խաչուիլ: Եւ երբոր առանձինն կը հարցնէին առաքեալները իրեն, կը պատասխանէր անոնց: — «Զեզ տուեալ է զիւել զիսորհուրդս արքայութեան երկինից»:

Առաքեալները ամենէն աւելի պիտի գիտնային արքայութեան խորհուրդը, վասն զի անոնք պիտի տային հեթանոսներուն յաւիտենական արքայութեան աւելափոր:

Մատթէոսի Աւետարանին մէջ կը ներկայացուին ուրիշ վեց առակներ երկնքի արքայութեան առնչութեամբ, որոնք մեկնելէն ետք Յիսուս կը հարցնէ իր աշակերտներուն: — «Զա՞ս ուստեք ասեն զինէն մարդկող թէ իցեմ: Ասաւ դարձեալ: — «Իսկ զո՞ս ուստեք ասէք զինէն թէ իցեմ . . .»: Դիտէր Յիսուս թէ պա՛րզ իր աշակերտները կը հաւատային իր Աստուածութեան, հետեւած էին իրեն այդ հաւատքով, մինչ ամբոխն ու ժողովուրդին ծիրանաւորները չէին կրցած ըլլալով:

Պիտի հալածէին զինք: Երկրային ու աշխարհային թագաւորութիւն մը կ'ուզէին: ի՞նչպէս ըմբռնէին ցեղային մոլեսանդութեան մոլոցքէն բանուած խեղճ մարդիկը, Տիրոջ երկնայինութիւնը, յաւիտենական թագաւորութիւնը:

Սոսաքեալները առանց երկմտութեան յայտարարեցին թէ օգուն ես թագաւորը Խորայէլիս: Թագաւոր մը հպատակներ կ'ունենայ: Յիսուս հոգեսոր հպատակներ կ'ուզէ միայն: Հպատակութեան ստացումը ներքին յատկութիւններու է կապուած: Իր քարոզութեան և վարդապետութեան մեր կեանքին մէջ արտայայտուիլը, և սերմերուն բարւոք աճեցման և հոգեկան պայծառացման և առաքինացման յաջողութիւնը կրնայ: յաւիտենական թագաւորութեան մը հպատակութիւնը ապահովէլ մեզի: Այս իմաստով եթէ կարենանք թօթափել հեթանոսական աշխարհայինութեան փառքը, կրնանք որդեպրուիլ յաւիտենական թագաւորութեան՝ որ կը հիմնուի ու կը մեծնայ սրտերու սրբարանին մէջ:

Աշխարհի մեղքերէն չորցած մեր հոգին սերմերուն բանալով է որ անոնք կը բնան անձրեսել հոն և աճիլ և պտղաբերի: Այսպէս կրնանք ըլնարեալ անօթները ըլլալուն մէջ կարենանք ընդունիլ Աստուածութիւնը և որդեպրուիլ յաւիտենական թագաւորութեան, որովհետեւ Աստուածոյ արքայութիւնը ոչ ժամանակաւոր է և ոչ ալ սահմանաւոր, այլ՝ յաւիտենական: Ճշմարտապէս ապրուած քրիստոնէական կեանքը մըն է որ կրնայ մեզ առաջնորդել անանց թագաւորութեան փառքին, Աստուածոյ արքայութեան՝ որուն համար ըստ Յիսուս քի ներքս ի մեջ է»:

Անհրաժեշտարար ամէն ոք պարտի բերբի զաշտի մը վերածել իր հոգին, կարող ըլլալու համար աճեցնել Տիրոջ սերմերը օքնդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարբութ: Այլապէս պիտի նմանինք հեթանոսներուն որոնք երկրային թագաւոր մը կ'ուզէին, բայց անոր թագաւորութիւնը ժամանակաւոր պիտի ըլլալը ու աշխարհի փառքին հետ չուտով պիտի թագաւոր: Երկնային թագաւորութիւնն է միայն որ կ'արհամարհէ ժամանակը ըլլալով անսկիզբ և յաւիտենական:

ԶՈՒԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ 2.

### Յ Ե Շ Ա Տ Ա Կ Ա Ծ Բ

Կ'ոզեկոչեմ ես նորէն, յիշատակներըս ամէն,  
Եւ մոզական խօսերէս, հրահանգի կը վազեն  
Բոլոր նորտերը կամքիս, մեծ կամ զողորիկ, օ՞ն ինչ փոյք  
Կը փաթքըսին ու նըլու կը փափառն ինձի “բոյդ”:

×

Ճիզերս ամէն դասալիք, կը սեղմեն ձեռքըս ուժգին  
Մէկն ալ անա որ կուզայ փոքիներն իր քօրուելէն  
Իմ անցեալիս խորերէն արձազանցն է հրճուանինին  
Զոր կը նանջնամ տարիմէն եւ օրօնս նասակէն:

×

Կուզան անոնք աղմուկով, կը բռնեն պար աչքիս դէմ,  
Հոս մանկութիւն մ'անխըռով, հոն կիանիք, կոխս ու մերք ժէն  
Կը լեցընեն անձկութիւնն այս ներկային ալեխուով.  
Կ'ուզան, ամէննեն ալ կուզան պարուել զիս նեւսանիով:

×

Մէկն անոնցմէ կարծես թէ կայմը ծըռած նաւ մ'է նին  
Որ փորուկէն խրած է հրուանդանին երազի.  
Միւսն ալ ժպտով ընական, կը նրէ միւս ուրիշին  
Խոկ վերջինն ալ կը յուզէ զիս ամենմէն աւելի:

×

Ս.հաւասիկ կը լեցուին յիշատակներըս բոլոր  
Ս.փերուս մէջ ու անկէ ինչպէս սարէ հատիկներ  
Մէկիկ մէկիկ կը զլորին նիւզ նամրիչիս պէս կլոր....:

Հայէպ

ԶՈՒԵՆ Վ. 2.

## Ա Զ Շ Ա Խ Ե Վ Ե Ր Ը

... Եւ ազդաւներն իրիկուան, սրգեղ ու բիւս կանչերով  
Կարծես կ'ուզեն ժիշ մը լոյս կորզել յոզնած արեւէն:  
Ոմանք՝ խոնչէնքը օրուան, բրած հանգիս նըստարան,  
Դրդեակի մեծ ասիմին անշարժ զարգերը կ'ըլլան:

Բոկ ուրիշներ, շնորհալի պար մը բըռնած օդին մէջ,  
Նանքարզելին սուրբին դէմ կըսուցն իրենց կը սրբէն.  
Ոնդին ազդաւ մը խուօր, բառած վըրան ցողոնին  
Եւ վիշտովն իր մեկուսի, հանդիսական ու սրտում,

Բըլուրն ի վար կը նայի ուր կայ շարժում եւ հոծ կեանք:  
Մայրիներէն բարձրաբերձ, նոնիներէն ինքնամփոփ  
Կելլէ նիշը ազդաւին խոզին խայրին պէս ընկնող:

Քիչ վերջ օրինեալ մուրը նաս, պիտի ըլլայ խանձարուր,  
Ազնուական եւ նըլոյարտ բըռչուններուն այս սարքեր,  
Եւ նակարանն անցորդին ալ բընանայ մինչեւ լոյս:

Ո Ն Ե Լ



\* \* \*

Սոսում են ծաղկունն այս կանաչ - կարմիր,  
Քո զոհերն էին նայենի երկիր:

Ով նայենինի նամար է մեռել՝  
Զի մեռել . . . ահա ծաղիկ է դառել:

Ահա ինչու է իմ սիրը դողում,  
Երբ մէկն ու մէկը ծաղիկ է բաղում:

ՅՈՎՀ. ՇԻՐՈՋ

## Խ Ս Հ Ա Զ Ա Զ Ա Խ Ա Ս

Մանկութենէս մինչեւ այժմ ես ինքինին եմ որոնած,  
Քընութեան մէջ, զիրենուն եւ անձերուն իմ սիրած,  
Ցիսուսին մէջ, Պուսային, մենակեացին՝ Նարեկայ,  
Որոնցմէ մաս մունեցած եմ հոգիս մէջ ներկայ:

Գըտած եմ մեր միշտ մինծմէ, իբրեւ Երազ, իբրեւ վիշտ,  
Իբրեւ կարօս անյազուրդ, իբրեւ Խորհուրդ ամբարիչտ,  
Ծիլին, ծաղկին ու ծառին, ողբերուն մէջ արևուն,  
Հմբուսացած ծովուն մէջ, հեծեծանիին մէջ նովուն:

Պիտ' ծրիի կեաննն ինչպէս խոս ու քափի ինչպէս սաղարք,  
Եւ ինքիները որոնէ եկող անցնող ամէն մարդ,  
Քիչեր սակայն պիտ' գըտնեն իրենց անձեն քաւական՝  
Եւ միշերն այդ պիտ' կոչուին Շելլի, Վերլէն կամ Դուրեան:

Հիմա նորէն կը փընտեմ՝ սենեակիս մէջ դըռընփակ,  
Ինչպէս ծարաւ ուղեւոր որ կ'որոնէ ջուրին ակ:  
Պիտի փընտեմ ես ինքինին այժմ եւ միշտ եւ յափեան,  
Ո՛վ զիտէ օր մը թերես զըտնեմ ես անձըս լրման:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

## Խ Ա Ն Կ Ա Խ Ե Ց Խ Ա Ս

Ճամբաներէն ամայի մեզ կը դառնամ պարտասուն.  
Այս մարմինովս տիեղծ, այս հոգիովս տիստ, մուր,  
Ո՛ւ կը դառնամ այս զիւեր կենանորդ ջուրերուդ...:

x

Օ՛, այս պահուս ես ի'նշան կ'ուզեմ ըլլալ վերսին  
Մանուկն այն նեզ ու խոնարին ու հոգիով մեղմօրօր,  
Որուն երէկ նայեցան մարդիկ անոււ աչերով:

x

Արդ փորորիկն է խամրած զեղեցկուրիւնն իմ բոլոր,  
Կուրած հնարն իմ հնիոււ ու ձգած զայն ամայի,  
Աւրիէ զուն լոկ կը լսես հառաջանեներ ամենի...:

x

Երազներուս աւխարինէն, նին իղձերով խանդավառ,  
Կուրամ ահա սրարունց ո՛վ մանկուրիւնն իմ անմեղ,  
Բաց նակատիդ վերսին դնել նամբոյր մը լուսեղ...:

**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ****ԳԻԼԳԱՄԵԴԻ ԴԻՒՑԱԳՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ**

ՍԻՒՆԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կը չարունակենք ասուրական բնագիրը՝ սկիզբը՝ պակասաւոր. Գիլգամեշն ու էնկիդուն հասած են մայրիներու անտառին մայրագուռը՝ անեղ Քումբարայի կողմէ պաշտպանուած. Էնկիդուն կ'ըսէ իր ընկերոջ՝ Գիլգամեշին:

39. — «[Յիշէ թէ իշէ] ըսիր Աւրուկի[ի մէջ].  
 40. — [ել] եւ կանգնէ [որպէսզի զինքն սպաննել կարենասո].  
 41. — [ . . . . . Գիլ] գամեշ՝ չառաւելով Աւրուկի ։ . . .  
 42. — [Երբ Գիլգամեշ] լո[հց] խօսքը ըլ [անոր] բերնին, վատահութեամբ լցուեցաւ:  
 43. — «[Աճա] պարէ՛, մօտեցիր իրեն, որպէսզի ան չ. . . . .  
 44. — [չիջնէ] անտառը ու . . . . .  
 45. — սովոր է ան, եօթը վերարկուներ կրել.  
 46. — [մէկն է] հազած լոկ, վեցը (գեռ) հանուած ենք: . . .  
 47. — Կատաղի վայրի եզի մը պէս . . .  
 48. — . . . . . ետ քաշուեցաւ լի . . . . .  
 49. — անտառին գէտը կը կանչէ . . . . .  
 50. — Քումբարան՝ զերթ . . .

ՍԻՒՆԱԿ ՎԵՏԵՐՈՐԴ

**Ակիզրը՝ պակասաւոր:**

23. — [Էնկիդուն] բացաւ իր [բերանը] ու [խօսի] յաւ, [ըսելով Գիլգամեշին]:  
 24. — «[Բարեկամ] չիջնէնք» [անտառը].  
 25. — [Երբ բայ] յիր [մայր դուռը, ձեռքս] թուլցաւ ։  
 26. — [Գիլ] գամեշ՝ բացաւ իր բերանը ու խօսեցաւ, ըսելով [էնկիդուին]:  
 27. — «. . . բարեկամ», տկար արարածի մը հանգոյն . . .  
 28. — [ . . . մենք] անցանք այդ բուլոր (?) . . . . .  
 29. — . . . մեր առջեւն է . . . . .

30. — [Բարեկամ] (որ) եփուն (ես) մարտի մէջ, ճ[արտար] կոռի մէջ.  
 31. — . . . հզիք, ու պիտի չսոսկաս [մանէն]:  
 32. — . . . Ինձի հետ . . .  
 33. — . . . թժբուկը, զօր կ'ըսէինք . . . .  
 34. — թող զիրնայ ուժասպառումը քու բազուկէն, ու տկարութիւնը անցնի [քու ձեռքէն]:  
 35. — . . . բարեկամ, [իջնէնք միտափն [անտառը].  
 36. — թող քու սիրոն . . . . մարտի մէջ, մացի՛ր մահը, ու մի՛ ։ . . . . .  
 37. — . . . մարդ մը խիզախ (ու) չըջահայեաց:  
 38. — [Ով օր] կ'երթայ [առջեւէն] կը պաշտպանն իր անձը, (ու) կը թիւ ւարկէ ընկերը:  
 39. — [Երբ յի] հան, անուն մը կը կերտեն իրենց համար ։  
 40. — Հասան երկուքը, [դա] յար լեռը:  
 41. — [Դազ] ըլցաւ իրենց խօսակցութիւնը, (ու) մեացին անշարժ:

ՏԱԽՏԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՍԻՒՆԱԿ ԱՌԱՋԻՆ

1. — Անշարժ կեցան ու ակնապիչ զիտեցին անտառը:  
 2. — Կը հայէին մայրիներու հասակին:  
 3. — Կը զիտէին անտառին մուտքը:  
 4. — Ուր օր Քումբարան սովոր էր քաւ լել, ուղի մը կար.  
 5. — Հաւիդներն էին ուղիղ, ու անցքը հեշտին:  
 6. — Կը զիտէին մայրիներու լեռը՝ բնակավայրը ասուածներու՝ գահոյքը իրնինիի (Հ4):  
 7. — Լերան առջեւ, մայրիները կը ցուցադրէին (Հ5) լրենց լիութիւնը.  
 8. — անոնց չուքն էր [ա] լոււ, հեշտացի կել.  
 9. — [ծած] կոււած էր մացառքը, ծածկուած . . . . .  
 10. — . . . . .  
 11. — . . . փարսախ մը . . .

(Հ4) հշտաբ զիցուհւոյ ձեւ մը:

(Հ5) բնագիրը ունի եղակի՝ isu erini na-shi hi - sib - shu:

12. — . . . երկու - երրորդը . . .  
13-16. — (փացած):

## ՍԻՒՆԱԿ ԵՐԿՐՈՐԴ

1. — [եր]կար ժամանակէ մը ի վեր, թուր  
մը . . .  
2. — [որ] սկսեալ . . .  
3. — . . . թող կործանին . . .  
4. — զա[չոյն] մը, . . . սուսեր մը . . .  
5. — . . . . . .  
6. — ծածկ[ուած է] . . .  
7. — թումբա[բան] . . .  
8. — չի զ[ա]ր . . .  
9. — չի զ[ա]ր . . .  
10-16. — (լրատ).  
17. — էնլիլ . . .  
18. — էնկիգուն [բացաւ] իր բհրանը [ու  
ըստ Գիլգամիշին]:  
19. — « . . . թումբարա . . .  
20. — [երազ] մը, [ուրիշ] մըն ալ . . .  
21. — . . . . . .  
22. — խախտելով . . .  
23. — [թաղ] փացնել տայ (?) .  
24. — [Բարեկամ], թող ըլլան եր[էք (?)]. . .  
25. — . . . զօրտօր . . .  
26-27. — . . . . . .

## ՍԻՒՆԱԿ ԵՐՐՈՐԴ

32. — «[երկրորդ եր]ազը զոր [տես]այ . . .  
33. — կեռակիրճերու [մէջ կը գտնուէ  
ինք (?)].  
34. — [լեռ մը] գլորեցաւ . . .  
35. — եղէզնուատի պղտիկ ճանձերուն պէս  
[էինք] . . .  
36. — [Ան որ] ծնած էր ար[ձակադաշտի  
. . .] վրայ:  
37. — էնկիգուն [ըստա] իր բարեկամին,  
ե[բազը] [մեկնելով]:  
38. — [Բար]եկամ, [բուռ] երազն է նպաս-  
տաւոր . . . . . .  
39. — [եր]ազն է սքանչելի . . . .  
40. — [Բար]եկամ, լեռը զօրտեսար [թում-  
բարան է]:  
41. — Պիտի ըս[նենք] թումբարան, [պի-  
տի զինքը մեոցնենք],  
42. — ու [պիտի] իր զիտիլը [նետենք]  
զաշոը . . . . . .  
43. — Առաւօտուն . . . . . :

Պօղագքօյէն արտահանուած բնագրի մը  
վրայ, արձանագրուած կը զանենք նման  
օրինակ երազ մը, հրատարակուած E. Weid-  
nerի կողմէ, Keilschrifturkunden aus Boghaz-  
köi, մէջ, Heft IV, Berlin, 1922, թիւ 12:

5. — Բանեցին իրարու (ձեռքէն ու) զա-  
ցին երեկոյեան հանգստեան:  
6. — Ենիջը զոր զիշերը կը հեղու, նուա-  
ճեց [զիրենք]:  
7. — կէս զիշերին, քունը [հեռացաւ  
իրմէ] (66):  
8. — Պատմից երազը ինկիգուէն՝ [իր  
[բա]թեկումին]:  
9. — «Եթէ զուն զիս չարթնցուցիր, ին-  
չո՞ւ [արթնցայ]:  
10. — Էնկիգու՝ իմ բարեկամ, տեսայ [երկ-  
րորդ] երազ մը.  
11. — զիս չարթնցուցիր, ինչո՞ւ . . .  
12. — Առաջին երազէս զատ, երկրորդ մը  
[տեսայ] . . .  
13. — երազիս մէջ, բարեկամ, լեռ մը  
[զլորեցաւ].  
14. — բազիսեցաւ ինծի, բանեց ստքերո . . .  
15. — Լուսաւորութիւնը կը զօրանար,  
մա[բա] մը [երեւցաւ]:  
16. — Գեղեցկա[գոյնն] էլ ան երկրին, իր  
վայելչութիւնն [էլ բացառիկ]:  
17. — Լերան տակէն զիս քաշեց . . .  
18. — Զուր տուաւ ինծի ըմպելու համար .  
սիրաս հան[գարեցաւ]:  
19. — Գետնին վրայ զետեղեց [իմ] ստ-  
քերը . . . .  
20. — Էնկիգուն ըստ իր աստծոյն . . .  
21. — Գիլգամէշին:  
22. — «Բարեկամ, եր[թա]նք»:

Մնացեալը, հատուած ական: կը չարու-  
նակինք ասուրական բնագիրը:

44. — Թուան փարսուխէ [վերջ], [պատառ  
մը] կար[եցին] (կերան):  
45. — Երեսուն (յաւելուածական) փարսուխ  
վերջ, կանգ ասին [զիշերուայ հա-  
մոր]:  
46. — Շամաշի առաջ, հոր մը վորեցին . . .  
47. — Գիլգամէշ [լեռը] բարձրացաւ . . .  
48. — Հեղեց իր նաշինը . . . .

(66) Գիլգամէշէն:

49. — «Ո՞վ է իս, բեր երազ մը . . .  
50. — բրե անոր համար . . . .

ՍԻՒՆԱԿ ԶՈՐԾՈՐԴ

1. — [Լեռը] բերաւ եր[ազ մը էնկիդուին համար]:  
2. — Բրա[ւ] անոր համար . . . .  
3. — Յուրա ամրափ մը [ան]ցաւ . . .  
4. — Կծկիլ [առաւաւ] զինքը . . .  
5. — . . . ու լերան հունտին նման . . .  
6. — [Փիլ]գամեէլ [իր] ծունկերաւն վրայ կրթնցուց իր ձնօաը:  
7. — [Եին]ջը որ կը հեղու մարդոց վրայ, ինկաւ՝ (իջաւ) իր վրայ:  
8. — Կէս (զիշեր)[ին], աւարտեց իր քունը.  
9. — Ելաւ ու ըսաւ իր բարեկամին:  
10. — «Տարեկամ», արդեօք զիս չկանչեցիր, ինչու արթնցայ:  
11. — Արդեօք չհպար ինծի, ինչու զար հուրած եմ:  
12. — Աստուած մը չանցա՞ւ արդեօք, ինչ չո՞ւ անդամներս են սարսուն:  
13. — Բարեկա՞մ, տեսայ երրորդ երազ մը.  
14. — ու անուրջը զօր տեսայ, սոսկալի էր բուրովին:  
15. — Երկինքը կ'ոռնար, երկիրը կ'ոռնար.  
16. — [ցիրեկը] նուազեցաւ, խուարը եղաւ.  
17. — Հանթը [կը] փայլատակէր, կրակը կը բորբոքէր.  
18. — [ամպերը] կ'ուսէէին, տեղալով մահ.  
19. — Լուսաւորութիւնը կ'ան[հետանար], հուրը կը մարէք.  
20. — [ու ինչ որ] կ'իյնար, մոխրի կը վերածուէք:  
21. — [Ե՛կ], ի[չնենք] զաշտը, որպէսզի խորհրդակցի կորինանք միասին:  
22. — [Երը] կնկիդու [լսեց] երազը, որ ան պարզեց իրեն, ըստ Գիլգամէշին:

Մնացեալ մասը՝ կորսուած. այս լրատը կ'ամբողջացնենք. Հիտիտական բնագրով մը, Հրամարակուած J. Friedrichի կողմէ, Zeitschrift für Assyriologie և մէջ, 1929, XXXIX, էջ 8 . . .

7. — [Գիլգամէշը] առաւ [կացինը իր ձեռաքին մէջ],  
8. — [ու] տապալեց [մայրին]:  
9. — [Բայց երբ Քուվազան] լսեց աղմուկը (?),  
10. — զայրացաւ (ու ըսաւ): «Ո՞վ է եկած,  
11. — [ու խառված ծառերը որոնք] աճած են իմ լեռներուն վրայ:  
12. — ու տապալած մայրին»:  
13. — [Եյն ասեն] երկնային Շամաշը իսունցաւ. անոնց,  
14. — երկնքէն: «Մօսեցէք  
15. — մի երկնչիք . . . .

Կոտրուածք: Աւրիշ Հիտիտերէն համարած մը կը չարուածէք. ան'ս, զերոյիշեալ ազրիւրը, էջ 11–13:

6. — Իր արցունքները [կը յարգէին] հեղանձաման,  
7. — ու Գիլգամէշը [ըսաւ] աստուածային Շամաշին:  
8–9. — (Հատուածական՝ թարգմանուելու համար):  
10. — «[Հետե]ւցայ երկ[նա]յին Շամաշը չին,  
11. — ու հետեւեցայ ուղիին սահմանածած [ինձ համար]»:  
12. — Երկնային Շամաշը լսեց Գիլգամէշի աղօթքը:  
13. — ու սաստիկ քամիներ կ'իլլեն Քուվազի դէմ:  
14. — Ենձ հովը, հրւսիսային հողմը . . .  
15. — փոթորիկը, ցուրտ քամին, ամպը [սպլը],  
16. — տաք հովը: Աւթը հողմեր ելան իր դէմ:  
17. — ու կը բազմին [Քուվազի] աչքերուն:  
18. — ան ոչ կրնայ առջեւ երթալ:  
19. — եւ ոչ ետեւ:  
20. — Այն առաջ Քուվազան տեղի տուաւ:  
21. — Քուվազան ըստ Գիլգամէշին:  
22. — «Թոյլ տուր որ երթամ, Գիլգամէշը, իմ [տէրը] սպիտի ըլլայ» զուն,  
23. — ու ես քու ծառան ըլլամ պիտի, եւ [ծառերը],  
24. — զօրս մեծցուցած եմ [իմ լեռներուն վրայ] . . .  
25. — զօրաւոր . . .

26. — [պիտի] կտր[եմ] ու [կանգնեմ պի-  
տի քեզի] տուներն :
27. — Բայց ինկիդուն [ըստւ] [Գիլգամէ-  
չ]ին :
- 28.-29. — «Եթ' [ահսար] /սօ[սք]ին, զոր  
Քուզավան [է արտաքերած].
30. — Քուզավան [պէտք] չէ [մաս ողջ] :

Շարունակութիւնը այս սիւնակին, կը  
թուի պահուած ըլլալ, R. Campbell Thompsonի, The Epic of Gilgamesh երկին՝ տասն-  
եւիններորդ՝ հատուածական տառապական  
տախտակի, քառասուն հօթներորդ առջին  
մէջ, որ կ'ըսէ: — «[Կտրեցին] Քումբարա-  
յին զլուխը: Առաջ, երկու բարեկամները,  
Գիլգամէչն ու ինկիդուն կը զերադանան  
Ուրուկ. Pritchard, Ancient . . . էջ 83:

## ՏԱԽՏԱԿ ՎԵՏՐՈՐԴԻ

1. — Ան(67) լուսաց իր ազտուած հերը, փայ-  
լեցուց իր զէնքերը.
2. — մազն իր զիխուն, թօթափեց իր ուշ-  
սերուն զբայ.
3. — նետեց իր ազտուած (զգեստները), հա-  
զաւ իր մաքունները.
4. — փաթթուեցաւ ծոպաւոր թիկնոցով  
մը, ու կապեց զօտի մը.
5. — երբ Գիլգամէչ զրաւ իր խոյը,
6. — մեծն իշտար, բարձրացուց (իր) աչ-  
քերը Գիլգամէչի զեղութեան:
7. — «Ե՞կ, Գիլգամէչ, եղիր (իմ) կողա-  
կիցը.
8. — շնորհէ ինձի քու պտուղը իբրեւ  
պարզեւ.
9. — եղիր զու իմ ամուսինը, եւ հս քու  
կինը.
10. — պիտի լծել տամ քեզ համար, կառք  
մը լրջաքարէ եւ սոկիէ,
11. — որուն անիւներն են սոկի, ու եղ-  
ջիւները . . . . .
12. — փոթորիկ-դեւեր (փոխան) մեծ ջո-  
րիներու պիտի կապես (անոր).
13. — մայրիներու բոյըին մէջ պիտի մեր  
տունը մտնես.
14. — երբ մտնես մեր տունը,
15. — չեմն (ու) զահը պիտի քու ոտքերն  
համբուրեն.

(67) Գիլգամէչը:

16. — պիտի քու առջեւ խոնարհին, արքա-  
ներ, աէրեր, իշխաններ.
17. — իբրեւ հարկ պիտի բերեն քեզ՝ [քեր-  
քը] լերան ու զաշտի.
18. — քու այծերը պիտի կրեն երեակե-  
ներ, քու ոչխարները երկու որեակե-  
ներ.
19. — քու բեռնատար էջը պիտի զերա-  
զանցէ զօրին.
20. — ձիերը քու կասքին, պիտի ըլլան  
հոչակաւոր արշաւի մէջ.
21. — [քու եղը] լուծի ներքեւ պիտի չու-  
նենայ ոչ մէկ մրցակից:
22. — [Գիլգամէչ] բացաւ իր բերանը ու  
բառ,
23. — [ուզզելով] մեծն իշտարին:
24. — «[Բայց ի՞նչ պէտք է տամ]» քեզ,  
եթէ առնեմ քեզ ամուսնութեան.
25. — [չունի՞ս արդէն իւղ] մարմիկ[դ], եւ  
զզհասեղէն.
26. — [կը պակսի՞ քեզի] հաց եւ սննդեղէն,
27. — . . . . . աստուածագայիկ ուտեսաւ.
28. — . . . . . ըմակել]իք որքայագայիկ.
29. — . . . . .
30. — . . . . . թօղ քու տեղն ըլլայ.
31. — . . . [պիտի] հազ[նիմ] վերարկու մը.
32. — [ . . . . . եթէ] ամուսնութեան  
քեզ առնեմ.
33. — [զուն . . . . .] ցուրտին.
34. — ետեւի զոււ մը [որ չ] արզիւեր, ոչ  
հողմը, ոչ մրբիկը.
35. — ապարանք մը, որ կը ճզ[մէ] զիւ-  
ցազները . . .
36. — փաթթոց(68) մը . . . որուն քօղը,
37. — ձիւթ մը որ [կ'ազտուէ] զայն կրողը.
38. — տիկ մը որ [կը թրչէ] զայն կրողը.
39. — կրաքար մը, որ [կը խորսակէ] քարէ  
պատուարը.
40. — յասպիս մը [որ չ'անցնիր իբրեւ յու-  
ութքը] սոսիւ երկրին [մէջ].
41. — արեխ մը որ [կը վիրաւորէ(?)] [ոտքն]՝  
իր տիրոջ.
42. — ո՞րն է այն սիրահարը [զոր սիրեցիր  
զուն] ցմիշաւ.
43. — ո՞րը քու խաչնարածներէն հաճելի  
եղաւ [քեզ երկար ատեն].

(68) Տե՛ս F. M. Böhl, Het Gilgamesj - Epos, Amsterdam, 1941, էջ 134. Նոյնպէս, James Pritchard, Ancient . . . էջ 84.

44. — Ե՛կ, պիտի թռւ[հ'ժ քեզ] քու սիւ  
բահարները.
45. — . . . զուն . . . իր ձեռքը :
46. — Թամմուզին<sup>(69)</sup> քու եր[իտասար]՝  
զութեան սիրահարին,
47. — ողբ սահմանեցիր անոր՝ տարուէ  
տարի.
48. — սիրեցիր խայտարդէտ ձախիկը,
49. — (սակայն) հարուածեցիր զայն, ու  
կոտրեցիր անոր թիւը.
50. — (ու) ան կը կինայ պուրակներուն  
մէջ, կանչելով սետպայի<sup>(70)</sup>:
51. — Սիրեցիր ասիւծը՝ արիութեամբ ան-  
թերի.
52. — (եւ) փորեցիր անոր համար եօթը  
առաւել եօթը փոսեր:
53. — Սիրեցիր ձին՝ մարտի մէջ հոչակա-  
ւոր,
54. — (սակայն) սահմանեցիր անոր՝ խա-  
րագանը, խթանը ու փոկը.
55. — (ու) գնաեցիր (անոր) եօթը փարսախ  
արշաւել.
56. — սահմանեցիր անոր պղտորել (ջուրը)  
ըմպելէ (առաջ).
57. — իր մօր՝ Ալլիլիին՝ ողբ հրամայեցիր:
58. — Սիրեցիր հօտին հօդիւը.
59. — [որ] անդոգաւոր կարկանդակներ՝ մոխ-  
րով պատրաստուած կը կուտէր քեզ  
համար.
60. — ու [հանա]պազօր ամիկներ կը մոր-  
թէր քեզիւ.
61. — (սակայն) հարուածեցիր զայն, ու  
փոսեցիր զայն զայի.
62. — իր իսկ հոգիւ պատանիները կը վտա-  
րին զայն հօմա.
63. — ու իր չուները կը խուճնեն իր որունք-  
ները:
64. — Սիրեցիր իշուլանուն՝ արմաւենիի  
պարտիզ պահնը քու հօր,
65. — որ քեզ յաճախս կը բերէր կողովներ  
արմաւի (արմաւներով լի),
66. — ու հանապազօր կը պայծառացնէր  
քու սեղանը.
67. — բարձրացուցիր (քու) աչքերը անոր  
վրայ, ու զացիր անոր մօտ:
68. — «Ո՞վ իմ իշուլանուս, (Ե՛կ), վայե-  
լենք քու առուզութիւնը.
69. — երկարէ քու ձեռքը, ու հովէ մեր ա-  
մօթիսածութեան<sup>(71)</sup> ու:
70. — իշուլանուն ըստ քեզի:
71. — «Ի՞նչ կը խնդրես ինձմէ.
72. — չեփից արդեօք իմ մայրը, չկե-  
րաց ես.
73. — սրպէսզի ռւտեմ նախատինքի հւ  
անէծքի<sup>(72)</sup> ճաշը:
74. — կնիւնները ցուրտի դէմ, [բաշւ են  
արդեօք լրիւ] ձածկոյթ ու:
75. — երբ լուց իր [իր] այս [ճառը],
76. — հարուածեցիր զինքը, (ու) փոխա-  
[կերպեցիր զինքը] սարդի մը.
77. — բնակիլ տուիր զինքը մէջտեղը ...
78. — չի բարձրանար ան ... չի իջներ ան ...
79. — ու հթէ զիս սիրեն պիտի, անոնց  
նման [պիտի վար]ուիս [ինծի հետ] ու:
80. — երբ իշտար [լսեց] սարկա,
81. — իշտար զայրացաւ ու [բարձրացաւ]  
զէպի երկինք:
82. — իշտար զնաց [իր հօր]՝ Անույի առջեւ,
83. — զնաց իր մօր՝ Անուումի առջեւ, [ու  
ըստու]:
84. — «Հայրիկ, Դիլգամէշը անիծեց զիս.
85. — Դիլգամէշ զրուատեց իմ մեղքերը,
86. — իմ յանցանքներն ու ան[էծք]ները<sup>(73)</sup>:
87. — Անուն բացաւ իր բերանը ու ըստու,
88. — ուզգելով մեծն իշտարին:
89. — «Ո՞ւն հրաւիրեցիր ... . . . . .
- ԱՆՈՒՇԱՀԻԱՆ ԱԲԴ. ԶԴՅԱՆԵԱՆ

(Giurimishakhihi 10)



(69) Տարնան ու երկրացործութեան մարմնա-  
ցում՝ մեռնող ու յարութիւն առնող աստուա-  
ծութիւնն էր թամմուզը, յիշեցնելով մեր Ար-  
քեցիրը. տես Ակազ. Պր. Դափանցեան, Ար-  
քեցիրի պատամանիք, Երեզան, 1945: Հաս, մեր  
ընազիրը կ'ակնարկէ թամմուզի համար հասար-  
ուած ողբի տարեկան հանդիսաւ բութեան,  
Եղեկ. լ. 14. «Եւ եմայծ զիս առաջի զրան տանն  
Տեսան, որ հայէր ընդ հիւսիսի, և անա հասէին  
անդ հանայք և ողբային զթամուզ»: James B.  
Pritchard, Ancient ... էջ 84:

(70) Ակկադերէն բառ մը չթեսչ նշանակող:

(71) Տե՛ս Revue d'Assyriologie, XVI, 1919, էջ  
183: Կոյազէս Pritchard, Ancient ... էջ 84:

(72) Archiv für Orientforschung, VIII, 1932/33,  
էջ 229: Pritchard, Ancient ... էջ 84:

ԳՐԱԿԱՆ

## ԱԵԹԷՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆ

0.92060.93000(°)

կը կանչեմ թղթերցողին անհանգստութիւնը, ու անունին հետ իր մտքին սպազմագործ մէկէ աւելի հակառական դատաստաններէ:

իրագուստաները, Եղիշյալի հանդէպ իրենց  
տհաճ տրամադրութիւնները թերեւս աւել-  
չըրդ խստութեամբ մը, տարածեցին անոր  
ընկերներուն ալ վրայ: Պոլսէն զես չքաժ-  
նուած, Մինաս Զերազ մեկուսացուած է  
արտար խաղերով: Եղիշան վերածուած՝ իր  
հրաւանդի խրառութակին: Պէրապէրեանը հո-  
մանիշ ըրած են հսկուութեան, անոր ա-  
տենարանութիւնները (ժաղավրական լուա-  
րաններու մէջ) զարձնելով ծիծառելի: Հը-  
ներելով մանաւանդ անոր ճառերը, աւելի  
հարազատ վերագրով՝ հուսլի-բամբերը, իր  
գպրոցը աւարտող տղոց ուղղուած, ճառեր  
որոնք հանդիսական են, ինչպէս պարտա-  
ւոր են ըլլալ, բայց կը պահեն խօսքին չեր-  
մութեան հատ օրոշ մտածումին ալ բարի-  
քը, անշուշտ գործնական բարոյախօսու-  
թեան մթնոլորտով մը ծանրաբեան, բայց  
վերջապէս ապրումին ջերմութիւնը յաճախ  
փախանցող ունկնդիրներուն:

Արուեստագիտները այդ արժեկորկությունը վկայացնում է միայն սրբազնության, այլև անցանել աւելի անզին։ Չը աքանան երրոր գմեծապատիւ խօսցականութիւնը կ'անուանէ իր ռուսուցիչը, բարատոնի մը չէ։ Արուեստագիտներու կրտսեր թեսք (Թէոդիկ և Ընկերք), մամուլը և ազգային շրջանակները այդ վերանորոգուած պաշտամունքը կը տանինի իր բարձրագէտին՝ չքեզ յորելեանով մը։ 1900ին Ռեթչոս Պէրովէրիան արևմտահայոց քրաքանութեան գահերէց անձնաւորութիւնն է։

(\*) ՍԱՐԻՆ իրենցովներուն կը ներկայացնեն հատօնած մը տաղանդաւոր գրաքէ-հնանայս Յ. Օսականի Համբարձուկիւր Արևիմանու Գրուկանու թան Գ. Հատուկին: Սայն յօդուածին շատ մը նիւթե՛ օօտափեկն ու տարածուն բլայլը կը յառաջազար հատուին մէկ մասն վերըուած ըլլայաւ հանգամանելիք: Խոր:

*Two more questions here:*

1877ին լոյս տեսած Արքաները կը բազէ<sup>ւ</sup>  
կանայ նառերէ, այլեւայլ անոնինին տակ  
խմբուած պատմական, բատեական, վիճա-  
բանական գրութիւններէ : Պետքերեան աղջ  
զիրքէն զիրջ տակուին պիտի աշխատի  
քսան մը տարի : Բայց պիտի աշխատի ար-  
ձակի զրայ : (Եթ թարգմանութիւնները,

գպրցական երգերը չեն պատկանիր բառաստեղծութեան): 1880ին երկու զրգութեան գարձեալ բանաստեղծութեան (Թշնամութեան և Գուրի, Գևորգին և Գևորգութեան, Ժաշկութեան): Մըդին և Իրէ (1885) քրոնիկներու շարք մը Հայոց կեղծանունով լոյս տեսած երեսքութեան հանգեսիր 1883-84

տարբերուն։ Այս համարին մէջ է որ Պէտք պէտք են սկիզբը կ'ընէ իր հուսկ-բանիք րուն։ Հօն կան նաև ուրիշ տախթով խռուած կրտսես հանեւ և գտնիքնականներ։ Դատիքը է ըստ Եսայել (1901) ուր ամփոփուած են վեցին խոսեր՝ հանդիսական խոսեր, Կիրակնաւուր խոսեր, համեսք և այլն։

խութեր, զբաթէ բալորն ալ լոյս տեսած արքմանայ մամուլին մէջ (1886-1901): Գորշը և Գորշութեն (1907), կրավան և գրական նիւթեր, զարձեալ լոյս տեսած մէր մամուլին մէջ: Առանցմէ զուրո՞ւ ՚Իրաք (արևատեսագիտական բանախօսութիւն) ու զասագիրքեր (անտեսագիտական և լեզուական): Խօնհասու առաջն Առաջնորդութիւն և

Բան մը կ'ըսէց ձեզի այս ցանկը: Առ  
եթէ այս, այս ցանկը և Պէրպէրեանի վարկը  
իրարու կը մնա՞ն հաւատարիմ: Եթագայ  
էջերը պատասխան մըն են այս հարցերուն:

Սյա լայնամտութիւնը որուն փաստը  
տուի Համապատեցի Ա. հատորին մէջ, Զար-  
թօնքի Արունեղին վաստակաւոր զէմքերը  
արժեսրի կարենաւու համար, Պէտքերեա-  
նին առթիւ ալ կը միջամտէ որպէսզի նը-  
ւերուի իրեն կենաւնագիս մը գրագէտի

արժեարելու : Անձ մը կ'արժեարուի կիրքերու, զուպարի, զրոհի ու ազմուկի լնդմէջէն : Խօսեցաւ, զրեց Ստեփան Փափաղանը . Պէրպէրեանին նման զասազիրքեր ալ հրատարակեց ու եղաւ ազգային շըջանակներու մէջ մեծաղղեցիկ տրիբուն մը : Բայց Հայութիւնը ու յիշատակութիւնը ընելով իր զէժքին, կը մատուցանէ անոր անձին օրինակը, հանրային սպասարկին հանդէպ յարգանքի հարկէ մը մզուած, ինչպէս ուզելով ալ թիւազը այն միւս ցաւը որ առաջ կուզայ ուժերու անպատճ վատանումէն : Պէրպէրեանի զործը — այդ ճառակրու մթերքը — անշուշտ չի պատկանիր զրականութեան պատմութեան : Բայց վկայութիւն մըն է, ինչ որ չեն կրցած ըլլալ Փափաղեանի, Մուրատեանի, մանաւանդ և . Հայկունիի զործերը, վասնզի այս բռնորին ետին տնձին պատամունիքը մնացած է տէր ու տիրական : Աչ նուազ կրքոտ, յանձնապատճան, յաւակնոտ անձնաւորութիւն մըն էր, իր խորքին մէջ, մեթէոս Պէրպէրեան : Բայց ունէր, այդ կիրքերուն քովի ի վեր, շատ ապահով զգայարանք մը ողջմուութեան : Յետոյ, իր կրթական զործը ըմբռնելու և վարելու շատ ապահով ուրիշ զգայարանք՝ մը

Ուրեմն կը մերժեմ իր անձին ու զործին չուրջ զոյցած մերժումին, ուրացումին անզթութիւնը որքան անձն ու զործը տօնազարդող հէքեաթիր : Պէրպէրեան ծիծաղելի հոետոր մը չէ և կամ զէշ աղէկ ինքզինքը պարտազրող ուսուցիչ մը : Անրիկ, տանց համալսարանական պատրաստութեան, քսան անգամ աւելի արդիւնք է տուած քան իր ժամանակի և աւելի վերջը զուրցերիական կամ զերժանական համալսարաններէ վկայեալ մեր սուստ ու փուտ մանկազարժները : Ասոնք յստակ խօսքեր են : Բայց այդ Պէրպէրեանը չէ նոյն ատեն այն մեծապայծառ իմացականուրիւնը որուն չնորհարացխը եղաւ Զրաքեան, հաւանաբար միսրիկ կեզծիքի մը լնդմէջէն, հաւատալով իր ըստածին, իր չիսակցած իմոցականուրիան (բառը անոր համար անկայուն է յաճախ) փաստը գտած ըլլալը յայտարարելով հաւանաբար այդ մարզուն անձին մէջ : Քործը 1906ին մէջ տեղն էր ու անկարող մչուշ, տարակոյս ստեղծել : Դաստիարակի մը ճառերը շատ

շատ գաստիարակի մը ճառերն էին ու Պէրպէրեան զրագէտի բացառիկ տուրքեր ալ չէր յայտնաբերած այդ ճառերուն տարուզութիւնը զունաւորելու, մշուշելու, ընդարձակելու :

Բայց թէ ինչո՞ւ ուրացան զինքը : Բայց 1890էն ատղին ուրացաղները իրենց թերթին մէջ (Հայէնէր) անոր ստորագրութիւնը (Կիրակիաւուր խօսելու շարքը հոն է լոյս տեսած) կ'ամորժէին օգտագործելէ : 1910ին Պէրպէրեան օրու խաւարում մը կ'անցընէր, ինձի համար հասկնալի զարձեալ, քանի որ տասը տարի առաջ անոր փառքը, լիալիր որքան կատարեալ, կանչուած էր ստեղծելու այդ հակազդեցութիւնը : Այդ օրերէն երեսուն, քառասուն տարիներ են անցեր : Արևմտահայ զրականութիւնը, այդ մարզուն զաւկին՝ Շահան Պէրպէրեանի զըրիչին տակ, չահած է ճշմարիտ, խորունկ, անհանուր խօսքին նմոյշներն ալ, միշտ նուսկ-բանէին շարունակութիւնը իրեւ, բայց անզամ տոանց զարդի, տօնական հանդերձանքի : Հիմա զիտենք թէ ինչ հերեակի էր խօսիլ երկրորդական ուսում աւարտող տղոց, երբ նման բանի մը կարիքը զգայինք : Այնպէս որ ուրացողները իրենց արդարացումը չէին կրնար այսքան հետուներէն գուշակած ըլլալ : Իրողութիւնը ստկայն, իմ կարծիքով, ծնունդ էր Պէրպէրեանի իրը բանաստեղծ պարզած անբաւարարութեան : 1901ին մէր բանաստեղծութիւնը ոչ միայն թէքնիք այլև աշխարհ կը փոխէ : Ըստ՝ թէ տասը տարի առաջ Մեծարենց մը կարելի պիտի չըլլալը : ԱՄեծապայծառ իմացականութիւննին հէքեաթն ալ նման է ուրիշ նման հէքեաթներու : Արձակազիր Պէրպէրեանին մէջ ես կը զատեմ (—) — բնոնիկազիրը, բ) — մածումներու մարդը, բ) զրական հարցերու հետաքրի մը, չըսիլու համար նենալաքը :

Այս բաժանումներէն առաջինը, բնոնիկազիրը, իր կարգին կը մնայ ենթակայ ուրու ճշգումի մը, retoucheի մը, եթէ կ'ուզէք, որպէսզի ձեր մտքին մէջ չստեղծէ չփոխութիւն : Քրոնիկը, մանաւանդ 1880էն ստղին, մեր գրականութեան մէջ յաճախ զեզեցիւթիւն մըն է : Այդ բառին հետ իմ զեզեցիւթիւն մըն է : Այդ բառին հետ իմ մտքիս մէջ կը յառնեն փառքերը Գ. Օսահենին, Արքիւր Արքիւրիալեանին, Լեւոն Բաշտիւրին, Տիգրան Կամարականին . . .

Դարձեալ այդ բառը ինձի կը թելազրէ շրքեղ վաստակը Պարոնեանին որուն Աշխաբէն Զոջերը քիչ մը ձեւազեղծ, բայց աւելի զիմացկուն քրոնիկներ են, ուրիշ բաներ ըլլալէ առաջ: Ու կը թելազրէ, նոյն մեթոսով, Մերենցը, Մամոււեանը, Զերազը, Եղիան, այսինքն մեր լրագրական ձաշակին վրայ չըջանէ մը վկայութիւն: Զօնրապ և Հրանդ Աստուր, ինչպէս Հրանդ այդ սեսին մէջ զրին ուրիշ տարրեր: Պէրպէրեանը: Մարտի և Երբ այն համարն է ուր 1880ի մարդոց և իրողութեանց չուրչը երիտասարդ իմացականութիւնն մը իր տպաւորութիւնները, գատաստանները կ'արձանազրէ, երբեմն չերմ, յաճախ ողջամիտ, միշտ պարզ ձեռվ մը: Դիմեցիք հարկաւ որ զգուշացայ գրականեն: Արդ, այդ գրականը չունէին Արփիարեանի ըշտառ իւնաւէն վերտառուած կտորները, Հրանդի Պատուի իւնաւէն իւնաւէնները: Բայց կը Կարգացուին մինչև այսօր ու պիտի կարգացուին թերես քանի մը սերունդ ալ: Պէրպէրեանի քրոնիկը կը տառապի բազմաթիւ տկարութիւններէ, խօթութիւններէ: Անիկա ծանրաբեռն է հասարակ-տեղիք նկատողութիւններով, մըտածութեանը որոնք զիրք կը հնատին, վարժապետը յիշեցնող շեշտով մը որ բարքերու չուրչ կը ստեղծէ զանութիւնն, հասարակ քննադատութիւնն: Անիկա նիհարը է շատ կեանելով: 160ի մօտ էջերու վրայ Պէրպէրեան զրազած է տաօնեակը չանցնող մարզերով (վերնագիրին մարդիկը անչուշտ ասոնք) — ուսուցիչ Խիկեանը, Եղիան, Տիւսաբը, Նորայը, Զիլինկիրեանը, վարժապետները կուտան կտաւը այդ նկարներուն: Պէտք է մասնաւորել ուրիշ ալ պարագայ մը: Պէրպէրեան հաճոյք կը զգայ պարաւելն, (շատ բարեկիրթ է հայհայանքի զիջելու համար): Արեւէի խմբակին, զիխուսորաբար Արփիարեանի վրայ իր լուտանալից տողերը կը պարզեն զանութիւնն ու կուրով, շատ աւելի չափով որքան չէին ասոնք զգալի Առ-ջնու ու էլեւի յարձակումներուն մէջ Տէրոյենցի վրայ: Մեր հանրային կեանքը շատ մը կողմերու վրայ ներկայացնող այդ անձնաւորութեանց վրայ Պէրպէրեանի ճիզը նկարագիրենք սկեսուելու, ճիզէ է մեացած դժբախտաբար: Խանդավառ ու խստադատ այս վարժապետը ճիշդ բաներ տեսած է անչուշտ այդ մարզերուն զործունէութե-

նէն: Սղիսան այդ էջերուն մէջ անչուշտ օփացուած է, բառը գործածելով լուսանկարչական տարողութեամբ, բայց լնդունուած ալ է առաջին իրաւ վերապահութիւն մը ուր ցաւը կայ արտայայտուած այդ ձեւազեղ զրողին անկայուն խմացականութիւնը ճիշդ գտասզի: Ծփացուած նկարներն է Զիլինկիրեանը որուն Առ-լուրութիւնն է Ա. Պուտը մեծ զիրքի մը վասքին արժանի նկատելու ատեն, հեղինակին լուրջ ու լեցուն միտքին հմայքին տակն է ինկած, բնազգական հակումով մը, համակրութեամբ մը, քանի որ իր ալ նամակները նըլքաբանադին մէջ կը պարզեն նոյն լրջութիւնը, ծանրախոն գնացքը իրերէն և մարզերէն զիտելի վերացումներու: Զիլինկիրեանի զիրքը աւելի յաջող Մարտի և Երբ մըն է, արուած ըլլալով կոմիրցի քրոնիկազիրին համեմատական անկախութիւննը, բարքերու (մանաւանդ ասոնց մութ, պըզտոր երեսներուն) չուրչ յօրնազեան իր կցուածքը, զործնական ու նոյն ատեն յաւակնոր լնդհանրացումներու իր ախորժակները: Պէրպէրեան, սենեակի զրող, զարգացուած չէ իր զիտողութեան զգայարանքը ու իր մարզերը տեսած է մատենազարանի մշուշի մը լնդմէջին: Այս է պատճառը որ այդ մարզերը մեան մշշային, հեռու: Չունիմ ձեզի իրը նմոյց առաջարկելիք անթերի կենդանագիր մը: Յաջողագոյնը անսոնցէ Վարժապետանին մահուան տթիւ քիչ մը սանրիմանբար, բայց ամբողջութեան մէջ զուսպ ու իրաւ պատկերացումն է ուր եթէ ձեզի չի տրուիր վայելքը, ափրական գէմքի մը հետ ըլլալու երանութեան, գէմ կը փոխանցուի արդար համակրութիւն մը ափրաբին ինչպէս զայն սեեսուող աշխատաւորին համար: Ի զիրջոյ մոռնալու չենք որ մուզիկ սեեսուելլ կարօտ է տաղ անդի մասնաւոր ձեի մը: Պէրպէրեան ոչ հեղինոց մըն է, ոչ ալ վիպասան մը. այսինքն այս կըրթանքներուն համար անհրաժեշտ է առաջարկած: Անիկա զիրքերէ շինուած զրող մըն է: Վերցուցէք Եղիսայէն իր զգայնութիւնը, զուք պիտի ունենայիք նոյն ափամարը զրողին: Ինչ զուզագիրառութիւնը որ իր ընկալուչ ու արտազրու երիտասարդութեան օրերուն Մինաս Զերազն ալ պարզէ նոյն տկարութեան ազգակները, իրաւ մարզեր գծելու արարքին համար մը-

նալով այնքան անբաւարար (Զերտագի Մէջ Հենակելը կենդանազիրներ չեն։ Յետոյ զըրուած են 1920էն զերջ, որով զատումներ ըլլալու տեղ զերիշումներ են, ու ամէնքս ալ տկար ենք յիշատակներու հետ)։ Էտաց զեղի պարոցէն մեղի եկած զրոզներու առ խմբակին համար զիրքը ամէն բան է կեանքը, անոր հասնելու պատրուակ։ Ահա թէ ինչու իրապաշտները այնքան անողոք հատեղականութեամբ մը հալածեցին այս մարդիրը։ Պէրպէրեան իր արտմագոյն ինչպէս ուժեղ բառերը չէ խնայած խարանելու համար Արէւէլը (որ թերթն է Արփիարեանին) և Մատիւ (որ իւթիւնհանէն անցած է Իրապաշտներուն)։

Կենդանազիրներու մէջ սա անբաւարարութիւնը աւելի զօրաւոր չափով մը կը կրկնէ ինքզինքը մանաւանդ իրոզութեանց հանդէպ։ Իւրաքանչիւր նամակ մէկէ աւելի հարցեր կը չօշափէ, ինչպէս կ'ըսնին, ու զանոնք ներկայացնելու արարքը կը վերածէ տեսակ մը . . . դասախոսութեան։ Պէրպէրեանին քրոնիկը թիթեցած տանիքանուրիւն մըն է. այնքան այս մարդուն մէջ խօսքի կիրքը ուժով տարեցաւ։ Տասնըհինգիրորդ նամակին մէջ անիկա կը պաշտպանէ խօսիլ, հաւանաբար ընդդէմ Արփիարեանին որ հոեւորութեան զէմ իր զայրոյթը չէր վախցած հոեւորներու վրայ փոխազրելու։ Երկու տարիներու հանրային կիանք մը նիւթն է այդ նամակներուն։ Ու զժբախտութիւն է ըսել որ այդ զիրքն ալ կը կրկնէ Հայիսկան Նուհանին զիրգանքը։ Մայինքն հարցերու չուրջ թիթե, թառցիկ, անբաւական նկատողութիւններ որոնք այժմէութեան օրերուն հանգուրժելի, թերես որոշ ալ հըրապոյրով, բայց ժամանակին մէջ տարօրէն արագ կը ցրտանան, կը մարին, եթէ երբեք ձեւի մասնաւոր ընորդ մը չպաշտպանէ զանոնք, և կամ վաւերազրական բարիք մը մեղ չընէ զիջող անոնց իրականութեան։ Պէրպէրեան այդ հարցերը չէ շասած, ինչպէս չէր տեսած մարդերը։ Անոնք որոնք ուղղակի կը չահագրգուեն զինքը — կիներու խնդիր, կրթական խընդիր, զրական խնդիր — զտած են աւելի տաք վերաբերում բայց չեն նուաճուած։ Համբարձում իփէքնեանի մահը անոր առարիթ պիտի ընծայէ կրթական իրոզութիւնը

ուսումնասիրելու։ Կը զրկեմ ձեզ իններորդ նամակին։ Զեր զտածը ընդհանուր խօսք է հոն։ Արքան տարրեր պիտի ըլլար պարագան եթէ երբեք այդ հարցը զրուած ըլլար իր բոլոր ընդարձակուրեամբը, զէթ իր հիմնական երեսներուն տեսակարար կը նիքովը։ Այսօր մենք կրնայինք զաղափար մը կազմի մեր զպրոցներէն, այդ 1880ի դոնիներուն։ Նման բարիք մը, զէշ զրոյ Զօրայինը այդ մարդէն քառորդ զար առաջ ունի արձանազրած իր յիշատակին։ Խէրաչն Ալդային Դաստիարակութեանը (Ն. Զօրայի եան) թէկ թռուցիկ ձեռով մը, կուտայ մեղի քիչ մը ճաշակ այդ զպրոցական հոգեխառնութենէն։ Արևէ գրական յաւակնութենէ զերծ կ. իւթիւնեան իր զպրոցական կեանքէ յուշերուն մէջ յաջողած է սեսանէ 1830—1840ի մեր զպրոցներուն ներքին նկարագիրը։ Այդ մարզը լրագրող մըն էր, բայց անխառնի լսել կ'ուզեմ առանց զրական մէծամտութեան։ Մերորպ նուպարեան, աւելի յաւակնուա, նուազ մօս է յաջողաւթեան։ Մ. Մամուրեան, մէ՛ծ գրագէտի իր ձրի տիտղոսին մեղքն է որ կը քաւէ երբ քանի մը տարիներու վրայ երկարաձգուող իր յուշերուն մէջ (Արէւէլքան Մամաւ, 1896, 7—8) անկարող կը մնայ այդ 1830ի հոգեաբանութիւնը մեղի կտակող զործ մը արտազրելու, մահուան այնքան մօտիկ, այսոնքն այն ըլքանին ուր մեր յիշատակները կը չօրինան, կը չօրինան ու հեռաւորագոյնները կը մնան, ատօվ կրկրապէս սրտառու իրենք զիրենք։ Այս նկատողութիւնները զործազրելի են Պէրպէրեանի բուրու քրոնիկներուն համար ալ։ Խոսեցայ Եղիային։ Որքան քիչ է տակայն Մարտի Լիքի Դ. նամակը որ իր նիւթը կ'առնէ Օտեանէն, Եղիային։ Խղճամիս, անյաւականուոր քրոնիկազրի մը այդ զոյզին առաջին անունին հետ ունէր բախտը Օտեան Երեւոյրը վճռապէս սեսենելու։ Մեծ վտարանին (Հոս Օտեանն է, թէկ զործածած է այդ որտականը Արիմեանին համար ալ) ամենէն խորհրդաւոր, հէքեաթունակ անձնաւորութիւններէն մէկն էր Պէրպէրեանը կանխող սերունդին, ունեցած ըլլալու էր պատանի Պէրպէրեանին վրայ խորունկ ազգեցութիւն, քանի որ այդ ազգեցութիւնը ընդհանուր էր որքան տիրական 1860—70ի ամսութ պիտի ընծայէ կրթական իրոզութիւնը

նուազն անձնական ապրումներ հիմա պիտի ստանալին վաւերագրական արժանիք։ Դ. Նամակը սովորական խօսքերու յաջող հանգէս մըն է, չունենալով ոչ մէկ փշտանք այն ամենէն որոնցմով գոյաւոր են մարդոց իրաւ, խորսունկ, ներքին անձնաւորութիւնները։ Իր ասպարէզին — ու ինչ փառաւոր — վախճանը ողջունելու վրայ, իր գերը կատարած, իր ամբողջ տարողութեամբը կերպազրուած Օտեանը լինչ գեղցիկ առիթ որպէսզի թարմ խմացականութիւն մը սերունդի համազրական փորձէ մը ըլլար առնուած։ Պէրպէրեան իրերուն ինչպէս մարդոց առջն կեցած է ատենաբանի մը հոգիով, այսինքն անոնցմէ օգտուիլ՝ իր խօսքը շինելու, իր նամակը լիցընելու տարօրինակ առաջազրութեամբ մը։ Իրեն համար է ականնը՝ իր ըսկիքներուն ծաւալն է ամէն բանէ առաջ։ Այս ահասկ մը տայնութեամբ մը մենք մեզ կը վերլուծենք, ուրիշները առիթ բանելով։ Բայց քրոնիկազիւրը չի նմանիր զրագէտին որ ուրիշները ըլլալի առաջ ինքինին է, պարտաւոր է ըլլալ։ Քրոնիկազիւրը միշտ կը շահի քրոնիկը ընելով, կարելի եղածին չափ հարազատ, հաւատարիմ քրոնիկին։ Ի՞նչ աւելորդ կուգան մեզի Մ-Շ-Ռ և Խ-Շ-Ի բոլոր ժամանումները, այսինքն գիրքին երկու երրորդը։ Ինչ երախտապարտ պիտի ըլլայինք իրեն, այդ ժամանումներուն, տեսութիւններուն, հասարակ-տեղիքին փոխարէն եթէ երբեք մեզի ըլլային արուած մարդերը, իրենց գտներական կնիքներովը, հարցերը իրենց բաւարար ողջունենումներովը։ Ոչ մին և ոչ միւսը մենք կը գտնենք այդ գիրքին մէջ։ Այն թեթև շահեկանութիւնը որ այդ էջերէն երբեմն կ'անցնի մեզի, զարձեալ մարդերուն չուրջը իր նշարներն են։ Գոված է։ ու մենք կընանք այդ գովեստէն զեղջել courtois, զիւանազիտական նկատումներուն բաժինը և զոհանալ զովեստը թելազրող տարրերուն բարիքովը։ Պարաւած է։ ու մենք կը տարուինք իր կիրքին հետ, ու զեղջելով հանգերձ բաժինը յաւելումին, կը զոհանանք յատակը կազմող տարրերով։ Ուրիշ օրինակ մը, աւարտելու համար սա վերապահումներու շարքը։ Ութերորդ նամակը թելազրուած է Տիկին Տիւսարի Մայորէն։ Ի՞նչ երանելի չըջան է այդ 1880ը որպէսզի այդքան հասարակ գործ մը

որթնցնէ այդքան ընդարձակ շահազրպառութիւն։ Պէրպէրեան Ո-Ն-Լ-Ռ-Ա-Ռ-Ն է Ա. Պուշչին ոչ միայն կը զովէ, այլև կ'ընէ յատկանշական խօստավանութիւն մը երբ կ'առաջարկէ այդ գիրքը զնել ամէն Պուսեցիի ձեռքը, որպէսզի Պուսեցիի իրենց քաղաքքը ճանչնան։ Շն անդր։ Խոսած եմ, իր տեղը, այդ հատորին և անոր նախատիպին՝ Հայուան Նախանձին վրայ։ Ջիս գրագեցնողը հսկ Զիլինկիրեանի կենդանազիւրն է Տիկին Տիւսարէն, որ իր կարգին անդրագարձած է Պէրպէրեանի վրայ։ Ի վերջոյ ամէն մարդ Զօհրապ չէ որպէսզի ընկերութեան մէջ շատ բարձր գիրք մը գրաւող bas-bleuի մը երեսին ըսուեն իրաւ, վիրաւորիչ, կործանարար խօսքեր (Զօհրապն իսկ չափը յարգած է պատշաճութեան)։ Աւ կ'ունենանք Պէրպէրեանի ութերորդ նամակը ուր Մայորն իմաստասիրական գէպ մը կը մկրտուի, ինչպէս եզրայի յօդուածները կ'ըլլան իմաստասիրական։ Խոյն ու մէկ խաղարկութեամբ։ Արդ, Մայորն կարկտան գիրք մընէ։ Ըսել կ'ուզեմ խակ ու հասարակ զաղափարներու հաւաքքում մը, կատարուած առանց ու ճաշակի։ Այդ հաւաքքումները Տիկին Տիւսար տեղաւորած է աւելի քան տարօրինակ, այլանդակ եզելութեանց շարանի մը ներսերը։ Պէրպէրեան կը հիանայ այդ հաւաքքումներուն ներքին արժեքին (իր կարգին առ ալ ուրիշ խօստավանութիւն որուն արժէքը պիտի իշնայ զնահաման երբ մածուլ Պէրպէրեանը վերլուծման ենթարկեմ) բայց կը լուէ զիրքին իրոք գէպ պարզած ահաւոր կաթին վրայ։ Աւթե՛ էջ ընդհանուր խօսք կին յլացքին վրայ (չըմունալ որ այդ նիւթը իրեն թելազրած է մէկէ աւելի ատենախօսութիւններ, յօդուածներ, աղջիկներու վարժարաններու հանդէսներուն մէջ հուսկ-բանքի նախավայելքները) ուր անշուշտ մուտք ունենալու է կանչուած զելցիկլը, կիներու պատմական գերին վրայ պատմական հասարակ-տեղիքի։ Այդ և կին տարազին հետ զուգորդ բոլոր ընթերցումներուն արձագանցը։ Կարծես թէ այդ ամէնը նըլլաքանադար հանդէսին ընթերցուներուն համար նորութիւններ կը կազմէին։ Փոքրել է զրական յլացքը։ Արդ, ընդհէմ այդ ու նման զովեստներուն, Մայորն գրական գործ մը չէ։ չէ կըցած ըլլալ։ Մինք ոչ խօստապահանջ ենք ոչ ալ ապե-

բախտ : Մենք աւելորդը, անտեղին, անբաւարար կ'ատենք : Իր բոլոր սեթե եթեալ յիմարսւթեանը մէջ ես չեմ կրնար կործանել Աւգուստուս (Խար-Պէյ), վասնի արդ galimatiasին մէջ առնուազն մարդու բեկորներ կան, բայց ջուրին տուած եմ այդ մարդուն բոլոր քնարերգուկան շուշուզն, տօնապարզ պատկները : Կը զրեմ այս տօնապարզ պատկները : Կը զրեմ այս տօնապարզ պատկները : Այս տարրերով եսայեան վարժարանէն չըջանաւարամէն աղջիկ ի վիճակի էր իր վիճակը գրելու : Այս փախանակ ընելու այս պարկեցած պարագը, Տիկին Տիւսար անզոյ հանաչում, տիպարներ, կիրք ու զգայնութիւն : Այս տարրերով եսայեան վարժարանէն չըջանաւարամէն աղջիկ ի վիճակի էր իր վիճակը գրելու : Այս փախանակ ընելու այս պարկեցած պարագը, Տիկին Տիւսար անզոյ հարցերու ցուցակաւ է կանգնած : Այս կարսնցուցած է ասպիթը մարդեր, ժամանակ մը, իրաւ ապրումներ սեենելու : Աւնինք աւելի հետաքրքրքրական օրինակ մը, զարձեալ կի՞ն գրոցէ մը : Օրիորդ Ալիս անունին տակը Տիկին Սիպիկ զրած է Աշխան Հեռութեալ վեպը Այդ վեպին մէջ կայ Տիկին Տիւսար մը, իր առմանթիզմով : Կայ Տիկին Տօնելիսն մը (Սիպիկի առաջին ամուսնուկան անունը) իր իրական ապրումներով : Վէպին առաջին մասը գրուած է Պէրպէրհանին սկսած շոզ-շողուն օճովը : Երկրորդը՝ Իրապաշտերուն պահանջած չոր կերպովը : Այսօր մենք կ'անգիտանանք այդ վեպին առաջին մասը բայց կը գուրգուրանք երկրորդին վրայ Ու ասիկա վճռական է : Պէրպէրհան այդ տողերը երբ սուրազը գոյութիւն ունենք ԺԹ : գարու երրորդական վէպին ամբողջ հասակը : Անշուշտ նոր կը սկսէր Սիթան տալի փառքը, բայց իրապաշտ եւրոպական վեպը առաջարած էր Հիւկոն, անվերտարձ : 1885ին խօսիլ Թշնամերու վրա Պէրպէրհանին օճովը՝ կը նշանակի մեալ հաւատարիմ պատանեկան զգայութիւններու

(Gurni Gwylbryd)

ՑԱՆԿԱՆ

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՐԱԿԱՆ

## ՊԱՊ ԱՐԵՎԱԿՈՒՆԻ

Յիրակի . այդ ժամանակը բազմազակ եւրպացին և լեռձաւոր Արքելքի մէջ միայն երեք կազմակերպուած պետքթիւններ զույթիւն ունեին . Հասմէական կայուրութիւն , Պարսկական միասնակառութիւն , և այս երկու մրցակից ու թշնամին երկիրներու միջև՝ երրորդը . Հայաստան :

Միջազգային մինչև Արևածական զքտանուազ ազգերն ու երկրները կլաներ էր Համեմական կայսրութիւնը։ Միջազգային մինչև Հնագիտական, Պարսիկ գերազիտ տէրութիւնը կը պարտագրէր ամենուն իր հեղինակութիւնը։

Աւստի գարմանալու հարկ կա՞յ, եթէ այս երկու հոկայ անհաշտ սպասներու մէջ ինկած երրորդ կազմակերպուած թագաւորութիւնը. Հայաստան, իր աշխարհագրական գիրքին պատճեռուած, դառնար կռուախնձոր երկու քին համար:

Հայաստան՝ Հռոմի ձեռքին, մշտակայսութանալիք մըն էր Պարսկաստանի արևմբութեան առհմանին։ Հայաստան՝ Պարսկաստանի հնդակայ, Փոքր Ասխոյ Հռոմէական գաւառները կը վատնգէր Սասանիան արշակունյաց առաջնորդութեան մասին պատճեն էին առաջարկ կատարելու համար։

Որով երբ Աստանեան Արքան Արև-  
մաւտքի կայսրութեան հետ պատերազմի  
հարցը կ'որոճար, նախ հաշուի պիտի տա-  
նէր Հայաստանը՝ Միւս կողմէ, երբ Բիւ-  
գանդական կայսրը արելեան արշաւանք  
մը կը ծրագրէր, առաջին կարգադրելիք  
խնդիրը Հայաստանն էր:

### 3. ԳԱՐԱՄՆԱՄԵՍԸ ԽՈՎԱԴՅՈՒԹԵԱՆ ՀՈԳԵՎԱՐՔԸ

Ահա Շատուն կը մօտենայ իր քսանէնքնա  
տարիքին։ Այժմ միանեծ ան տէրը արեւել-  
եան կայսրութեան, ինչպէս կոստանդին(2)։

(9) Մեծն կոստանդիանը պիտի կոչէնք քառա  
առանդին, հետազային կոստանդիան կայսիր ա-  
նուանին հետ շիրովութիւնը կուտազեցնելու մաս  
գրութեամբ:

տարիներու ընթացքին, իր մրտկիցները, կայսր կամ թագավանդիր, զինու զօրութեամբ խորտակելէ վերջ, միահեծան արքակալը եղած էր արևմտեան կայսրութեան:

Շապուհի փառատենչիկ միտքը Հոռոմէական թշնամիին հետ չափուելու պատըրուակ կամ պատճառներ օրոճալուն, երեքը իր աչքին խիստ ծանրակշիռ պիտի համրուէին, եթէ նոյնիսկ իրականին մէջ այդքան ալ Երիշիկալան չըլլացին:

Երեքէն կարեսորազոյնը: Համբաւաւոր Քոռասնամեայ Խաղաղութեան դաշինքը կը մօտենար իր վախճանին:

297ին, Պարսիկ թագաւոր Ներսէսը ջախջախիչ պարտութիւն կրած էր Դիսկետիանոս կայսեր բանակներէն: Խաղաղութեան դաշինքը նուսաստացուցիչ էր Պարսկաստանի համար: Հինգ նահանգներ Հոռոմի կը տրուէին: Հայոստանի արևելեան սահմաններն իսկ կ'ընդարձակուէին ի հաջիւ պարսկական Աստրպատականի հողամասներուն, հոչակաւոր Մեծն Տրդատի վերահաստատուած իշխանութիւնը ամբաղնդիւն համար:

Իսկ դաշինքին ուրիշ մէկ պայմանը կը պարտազրէր երկուստեք քառասուն տարի խաղաղութեան պահպանում:

Զարգտնալիօրէն, երկու կողմերն ալ այս վերջին պայմանը հաւատարմութեամբ կը յարգէին:

Հակառակ այն իրողութեան որ պարսկական արքունիքի համար հինգ նահանգներուն կորուստը յոյժ վարկարեկիչ և սև արատ մըն էր Սասունեան մինչն այդ յաղթական փալիլուն վահանին վրայ, Ներսէսի յաջորդները կլլած էին այս նախատինքը, սահմած ամբարտաւան սազմուէր յաւակնութիւնները և խոնարհեցուցած ուռուցիկ նշանակները իրենց գոռողութեան, ու հաւատարիմ յարատեսութեամբ յարգած դաշինքի պայմանները, ի մասնաւորի խաղաղութեան վերաբերեալ յօդուածը:

Յաջորդ պատճառը, որ Շապուհի դիւրագրգիտ դժգոհութիւնը կը հրահէր, Կոստանդին Կայսեր կողմէ Պարսկաստանի ներքին գործերուն միջամուխ ըլլալու պարագան էր:

Շապուհին առաջ և իր օրով, քրիստոնէութիւնը արագ նուաճութեար կատարած էր պարսկական հողերու վրայ: Երիշաւարդ

Շապուհի, որ հետագային Զրադաշտական գրութիւնները հաւաքել պիտի տար, զըրգուած կրօնամոլութենէ, կամ մեծազգեցիկ Մազկրէն, խիստ հրամաններ արձակած էր Պարսկաստանի քրիստոնեաններուն զէմ<sup>(10)</sup>:

Այս վերջինները աչքերնին ուզզեցին առաջին քրիստոնեայ Հառնէական կայսեր, Կոստանդինին, և անոր պաշտպանութիւնը խնդրեցին: Շապուհի ծանր հարկերով պատժեց իր այս հպատակները, որ յիմարտկան ամբարտաւանութիւնը ունեցեր էին զիմելու տար թշնամիին իրենց տիրոջ զէմ: Երբ Միմէն Եպիսկոպոսը, որ Տիգրոսի մօտ Անիկիա փարթամ քաղաքի քրիստոնեայ կրօնապետն էր, բոլոք բարձրացուց, Շապուհի, զայրացած, հրամայեց փակել եկեղեցինները և զրաւել անոնց կալուածները, խիստ յանդուզն Միմէնն ալ մտհուան դատապարտեց:

Կոստանդին կայսրը զիմեց Շապուհին, քրիստոնեաններու ինպատու: Նման քայլ մը պիտի ծառայէր աւելի ևս զրգուելու Շապուհը:

Թէոդորէ, եկեղեցական պատմիչը, կայսեր՝ Շապուհին զրած երկար նամակը ընդօրինակելէ վերջ, իր կողմէ կ'աւելցնէ: Անյա զերազնիւ կայսրը այնքան կարեկից խնամք ունէր ճշմարիտ հաւատքը պաշտօներու հանդէպ, որ ան ոչ մինակ հոգածու էր իր հպատակներուն, այլ նաև ուրիշ թագաւորներու հպատակներուն<sup>(11)</sup>:

Սասանեան արքունիքի համար, միջազգային քաղաքականութեան տեսակէտէ, այս բոլորովին նոր և կնճռուտ երեսոյթ էր, քրիստոնեայ հպատակներու պարագան, որ յաջորդ դարուն, այնքան գժնդակ անզրադառներ պիտի ունենար հայ կեանքի մէջ:

Վերջին պատճառ Շապուհի դժգոհութեան: Իր մէծ եղբօր պարագան էր:

Ինչպէս վերը յիշեցինք, պարսիկ մեծ իշխանները բանարկած էին Շապուհի մեծ եղբայրը՝ Արմիկզը, որուն իրաւունքն էր ստանալ թագը իր հայրը մենակելէն վերջ:

Այս ուսումնական իշխաննը տասնչորս տարի արգելափակուած մնալէ վերջ, իր մէկ կնոջ հնարամիտ օժանդակութեամբ

(10) Sozomen, II. էջ 9, 10.

(11) Thodoret, I էջ 24.

բանտէն փախած էր, նախ գացած հայ թառ դաւորի մօտ, որ իր բարեկամն էր, ապա ապաստանած Կոստանդին կայսեր մօտ<sup>(12)</sup>:

Հառմէտէական արքունիքի համար սկըզպ ընդունիլ և պահպանել այն օտարազգի իշխաններն ու արքայազգուները, որոնք, կամ պատանդ և կամ փախստական, կը յանձնուէին Հառմայեցիներուն։ Պատճառն ալ պարզ էր։ Պետական քաղաքականութեան յարափոփոխ պայմանները կրնային ստեղծել այնպիսի կացութիւն, ուր կայսրը այս իշխանները կրնար շահագործել, որպէս քաղաքական զէնք, ի նպաստ Հառմի։ Կամ թշնամի երկիրներու մէջ ներքին խոսքութիւններ սերմաններու, և կամ թագավառ հանջ ներկայացնելու։

Կոստանդին կայսրը ամենամեծ պատիւներով ընդունած էր Որմիզդ իշխանը և կը պահէր զայն արքունիքի մօտ։

Շապուհ չէր կրնար անտեսել այն իրուղութիւնը թէ Որմիզդ իր մրցակիցն էր Սասանիան գահին համար և եւ աւելի իրաւասու պահանջատէր։ Պարսկաստանի մէջ, օրին մէկը, զժգոհ իշխանները կրնային Որմիզդի ի նպաստ գաւեր լարել։

Արարական երկարատես և յազթական կոիւներէ իր բնածին ինքնավասահութիւնը ա'լ աւելի ամրապնդուած, Շապուհ որոշեց պատերազմ Հառմի դէմ։ Ան կ'ուզէր վրէժխընդիր ըլլալ իր պապուն՝ Ներսէս թագաւորի ամօթալի պարտութեան։

Դեռ գաշինքի պայմանաժամը չըրացած, Շապուհ սկսաւ իր սաղմական պատրաստութիւններուն։

Եւ իր առաջին գործը պիտի ըլլար լուծել Հայաստանի հարցը, եթէ կարելի չըլլար հայ արքունիքը սիրաշահիլ, զոնէ ջանալու էր զայն կերպով մը չեղոքացընել, և թոյլ չտալ որ Հառմին զինակիցի։

Շապուհ զիտեր որ Քառասնամեայ դաշինքի տեսողութեան, չըսելու համար ատկէ տառջ ալ, Հայ Արշակունի թագաւորները Բիւզանդական արքունիքի պաշտպանեալները և կողմանկիցները եղած էին<sup>(13)</sup>։

Իր նախապատրաստական աշխատանք-

ներուն մէջ երիտասարդ Շապուհ ի յայտ թերու իր զիւնազիտական գործունէութեան մէկ տիրական զիծը, որ երբեք ձեռքէ չգեց իր երկարատես իշխանութեան ընթացքին։ Այն է՝ ամէն միջացներով, ներելի կամ ոչ, հայ նախարարներու մէջէն կողմանկիցները ճարի, զանոնք մզկի ներքին պայքարներու թէ՛ հայ թագաւորի զէմ և թէ բիւզանդասէր նախարարներուն։ Փայլուն խստութեար, ա'լ աւելի փայլուն ոսկի, զաւ, սուս երգում, սպանալիք, պարտգային համեմատ՝ յայտնի, այլապէս ծածկաբար զօրացիկ հանգիստանալ անջատողական վտանգաւոր ծրագիրները որոշացող փառասէր և յանդուզն հայ նախարարներու։

Փաւստոսի զիրքը ամբողջութեամբ բարձրացաղակ վկան կը հանդիսանայ Շապուհի այսպիսի բազմահանգույց գործունէութեան։

Կրնանք անվարան ըսել որ Առանձնեան թագաւորներէն Շապուհ Բ.ի միջացաւ և իր գործօն աջակցութեամբն էր որ հայ նախարարներու մէջ մինչև այդ անկազմակերպ Պարսկական կուսակցութիւնը վերակազմութեաց և ուսնացաւ, որ Շապուհի օրով հասաւ իր զօրութիւն գագաթնակետին, ապրեցաւ իր սարսափելի յազթանակի ժամը, և նոյնքան զօրաւոր Հայ Բիւզանդական կուսակցութեան ձեռքէն խլելով առաջնութիւնը, Հայաստան աշխարհի մէջ արեան բազանիներ սարքեց։

Այսպէս, երբ Շապուհ պատերազմի վճիռ տևաւ, սկսաւ զաղտնի գործունէութեան հայ թագաւոր Տիրանի դէմ։

334 կամ 335 թուականն էր<sup>(14)</sup>։

Շապուհի գործակալները արգէն սկսած էին իրենց մեքենայութիւններուն։ Հայ նախարարներէն անոնք աւելի հակամէտ էին պարսկական ողոքութիւնը և մերձեցման, օրոնց բնագաւառները սահմանակից էին Պարսկաստանի, օրոնք, այդ պատճառու ալ, առևտութեան և անտեսական կապեր ունեցած կրնային ըլլալ իրենց հզօր գրացին հետ։ Ահա այդ տեսակէտէ, Շապուհի գործակալներու ամենէն աւելի մօտենալիք անձերը զիսաւորաբար Արձրունի և Արւենի իշխանութիւններէն կ'ըլլային։

(12) Zosimus, էջ 107։  
(13) Դիւրութեան համար յետ այսու Հառմէտէական կայսրութեան պիտի ակնարկներն որոնք բիւզանդական կայութութիւն։

Այս պարագային, երիտասարդ Շահ պուհի յանդուզն ծրագիրն էր նոյնինքն Հայ Արշակունի թագաւորի անձը ձեռք ձգելը և սոկոլիօրէն խորեքայտական միջոցներով, առեանգել Տիրանը և պահել կալանաւոր Պարտկաստանի մէջ, կամ, գէպքերու գարգացումը եթէ պահանջէ, սպաննել զի՞նք: Եւ Շապուհ մանր մունք փափկանկատ հաշիւներու մտագիր պիտի չըլլար, ոչ այս պարագային, երբ խնդիրը կը վերաբերէր թագաւորի մը, որ կը պատկանէր Սասանիաններու սիսերիմ թշնամի և յաւէտ աւտելի Արշակունի ընտանիքին:

Հաւանաբար, Շապուհի այս չափագանց յախուսն որոշումը՝ զրացի երկրի մը վեհապետը թակարգի ձգելով առեանգելու, մասսամբ մը ներշնչուած կրնար ըլլալ Պարտկական կուսակցութեան մէկ կամ աւելի նախարարներէն, որոնք անտարտակոյս վըստահեցուցած էին թէ, անզամ մը որ Տիրան թագաւորը մէջտեղէն վերնար, երկրին մէջ պիտի ստեղծուէր այնպիսի քասասին վիճակ մը, որ Պարտկա-Բիւզանցական պատերազմի պարագային, Շապուհի թշնամին ի վիճակի պիտի չըլլար օգտուելու հայ ուժերէն:

Եւ այս համոզումով ալ ընթացք ալբուցաւ զաւագրութեան:

Այս վասնագլի ձեռնարկին յարմար անձը նկատուեցաւ Ատրպատականի սահմանապահ Սատրապը՝ Վարագ:

Վարագ անմիջապէս գործի անցնելով, իրեն օգնական և զաւակից ձարեց նոյնինքն Հայ թագաւորի սենեկապետը՝ Փիոսկ Արտեմի, որուն հետ բարեկամ էր (15):

Երկուքին վարպետորէն ծրագրած դաւը վերջապէս յաջող վախճանի յանդեցաւ և Տիրան ինկաւ Վարագի ձեռքը:

Հայ թագաւորի հետ էր նաև թագուհին և մանկահասակ Արշակը:

Երկացած երկաթով Տիրանի աչքերը ատղեցին: Այս վայրագ արտաքը՝ պատիմէ աւելի բան մըն էր: Ընդհանրապէս, ընդգունաւած ըլլալով որ երկրի մը վեհապետը փիզիքական կատարելութեամբ օժտուած անձ մը պէտք է ըլլայ, զի՞նք անդամահատել կամ մարմինը խաթարել, այլևս կը զբկէր զի՞նքը գահը գրաւելու իրաւունքին:

(15) Փաւասառ, Գ. էջ 20.

Ազգագային Բիւզանցական արքունիքն ալ պիտի իւրացնէր այս անազօրոյն մեթուը, թագախնդիրներու կոստացող ախորժակը մարելու համար:

Անակնեալի եկած հայ աւագանին սակայն խուճապահար չեղաւ: Մեծ ժողով մը գումարելով, իրենց մէջէն երկու մեծ նախարարներ, Անդովկ Արւնի և Արշաւիր Կամսարական, երկուքն ալ իրենց պատկան տանիք նահագեաններ, ընտրուեցան զեսպաններ, որոնք պիտի ներկայանացին կոստանդին կայսեր և անկէ պաշտպանութիւն և օգնական բանակ ուզէին:

Մինչ հայ զեսպանները ճամրու էին, Շապուհ առանց ժամանակ կրանցնելու մտաւ Հայուսան երկիրը զրաւելու:

Այն նախարարները որոնք հակառակ էին Շապուհին, անկարող զիմազգերելու, իրենց ընտանիքով փախուստ տուին և ապաստանեցան Բիւզանցական հողեր (16):

Կոստանդին, որ Շապուհի վարպետ շարժութեարուն կը հետեւ ուշի ուշով, Գաւզիայէն կանչեց իր զոււակը կոստանդինու, որ հոգիւ տասնեօթ տարեկան էր, և Հայուսան զրկուելիք Բիւզանցական բանակի հրամանատար կարգեց (17):

Պարսիկ բանակը յառաջացեր էր Բասեն գւաւուը, Աւխոս զիւզը: Կայսերական լէզգիսներ հասան հոն և յաղթելով, թշնամին վարպեցին երկրէն: Տիրան թագաւորի զէմզաւագրութեան մասնակից հայ նախարարներ կոստանդինու և իր խորհրդակիցներու կարգագրութեամբ ձերբակալուելով Հոռմ զրկուեցան: Փախստական նախարարներ վերագարձան իրենց տեղերը, և երկրի կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնուեցաւ Անդովկ Արւնի և Արշաւիր կամ սարականի (18):

Այսպիսով Հայուսանի մէջ կրկին կը վերահաստատուէր Բիւզանցական չաներու նպաստաւոր գոյավիճակ մը, որ Մեծն Տըրգատի օրերէն ի վեր չատ քիչ անզամ վը-

(16) Փաւասառ, Գ. էջ 21:

(17) Julian, Vol. I. էջ 47:

(18) Փաւասառ, Գ. էջ 21: Julian, Vol. I. էջ 53: Յուլիանոս Կայսեր, Կոստանդինոսի մահուան առիւ խօսած հառին մէջ Հայ Պարսիկ զէպքերու մասին ըրած ակնարկութիւնները աւելի կը լուսաբանեն Փաւասառի ըստաները Տիրանի անկումէն միջնէն Արշակի զահակալութիւնը քանի մը տարուան միջնարարի մասին:

առանգուած էր: Եւ սրպէսզի սոյն զոյտավիճակը առանգով կիրազով չարուանակութիւն կու առանգիսու պատանգ կը վերցնէր Տիրանի անդրանիկ զաւակը՝ մեռած Արտաշէսի որդին Տիրիթը, և երկրորդ զաւակը՝ Տրգաւաբն (<sup>19</sup>):

Տիրանի յաջորդին հարցը զբաղեցուցած էր Կոստանդին Կայորը, որուն համար, ինչպէս նաև Բիւզանդական միւս կայսրերու, Հայաստանի Բիւզանդիոնի կողմանակութիւնը էական պայմանն էր Արքելքի խաղաղութիւնը էական պայմանն էր Արքելքի խաղաղութիւնը պահպանելու տեսկէտէ:

Յաջին, Կոստանդին Կայորը, թէ և միաշահծան տիրակալը ամբողջ կայորութեան, իր երեք որդիներուն մէջ կը բաժնէր աւրութիւնը: Այս երեքը, Կոստանդին կը բարսէր, Կոստանդիսու և Կոստանդին թէ զիս զիս անչափահաս էին, բայց մանուկ հասակէն կայորը զիրէնք պետական գործերու վարչեցուած էր: Իւրաքանչիւրին յաջորդաբար տրուած էր Կեսար պատուանունը, որ առհասարակ կը չնորհուէր փախարքայի կամ կայսեր օգնականի, ինչպէս Օդոսոս տիտղոսը կը պատկանէր միմիւրին կայունը:

Կրտսեր Կոստանդինին բաժնին կ'իջնար Գաղփան, Կոստանդիսու՝ որեւէնեան երկիրներու, և երրորդ զաւակը՝ Կոստանդ Խառը, Արքիկէ և արևմտեան Խլիլիս:

Բացի իր երեք զաւակներէն, Կայորը բաժնին հանեց իր երկու եղբօրորդիներուն, Տալմատիսու և Հաննիպալիանոս: Առաջինը՝ Գոթական սահմաններու, Մակեդոնիոյ, Թրակիոյ և Յունաստանի կառավարութիւնը կը ստանձնէր, Կեսար տիտղոսով: Խակ Հաննիպալիանոսին կը յանձնուէր Պանտոս, Փաքը Հայք և Կապաղովիիա: Զարմանալին՝ Հաննիպալիանոսին տրուած տիտղոսն է, Թագաւոր: Այս էէտք չուարեցուցիչ կը գտնեն շատեր, ինչպէս կիրապն (<sup>20</sup>), և անհասկընալի թէ ինչո՞ւ Կայորը իր զաւակներուն և Տալմատիսուն կեսար տիտղոսը կուտայ, իսկ Հաննիպալիանոսը կը հոչակէ թագաւոր, որ

յաջս Հասմայեցիներու ատելի տիտղոս մընէր:

Հայաստանի այդ ատենուան քաղաքական կացութիւնը թէրես կայսեր առած ոյու առեղծուածային քայլին բացատրութիւնը կրնայ առալ:

Երբ Հայ զեսպանները իրեն կը զիմէին զինուորական սժանդակութեան համար, Կոստանդին Կայորը, խորապէս զիտակցելով Հայաստանը միշտ Բիւզանդական նժարաբի մէջ պահելու անհրաժեշտութեանը երկու պիտութիւններու կապը ա՛լ առելի կ'ամբագինէր, յարմար գատած կրնար ըլլալ Արքակունիի տեղ իր արքայական ընտանիքն մէկու մը Հայաստանի թագաւոր ըլլալը:

Երբ Կայունը լեզէնները Հայաստան հասնելով կասեցուցին Պարսիկ բանակի յառաջխաղացքը և ստիգեցին Շապուհը նաև հանջել և զիրագառնալ իր երկիրը, Կոստանդին Հայաստանն ալ, ինչպէս Փաքը Հայքը, իր եղբօրորդի Հաննիպալիանոսի գիրիշխանութեան տակ կ'ուզէր տեսնել: Հայ աշխարհը եթէ Բիւզանդական բանակներով պիտի պաշտպանուէր, յարմար էր որ Բիւզանդական իշխան մըն ալ Արքակունի թագը զնէր իր զլխին:

Եւ Հաննիպալիանոս կը ստանար Կայունը Հասմայեցիներու ականջին տարօրինակ հնչող աննախընթաց տիտղոսը, Թագաւոր: Որովհետեւ արեւէնեան ժողովուրդներու համար աւելի հասկնալի, յարգուած և պաշտելի տիտղոս մըն էր Թագաւորը, քան թէ ստարութիւն կատակածելի կեսարը (<sup>21</sup>):

Հայ նախարարներ ստկայն Կայունը առաջարկ կամ ծրագիրը չէին կրնար ընդունիլ: Արքակունի անունը Հայաստանի մէջ, ինչպէս ատենուք Պարսկաստանի, յաջս ժողովուրդներու, այնու ստացած էր անկառկած էլլի նուիրականութիւն մը, որ միմիւրին աստուածներու ստորոգելի կրնար համարութիւն:

(<sup>19</sup>) Խորենացի, Գ. էջ 13: թէ Խորենացին Տրգաւանին երրորդ որդի կը կոչէ: կը թուի թէ այս սխալ է, քանի որ Տիրանի կաւանաւորման առանձ Արշակ մանուկ էր (Փաւաստոս, Գ. էջ 20): իսկ Խորենացին Տրգաւանին համար կ'ըսէ թէ պատանգ զնաց իր «ինոչ որդիներով»:

(<sup>20</sup>) Gibbon, Vol. II. էջ 212:

(<sup>21</sup>) Ամմանոսի Պատմութեան մէջ կը զըտնենք թէ Հաննիպալիանոսին արուած է ոչ թէ թագաւոր այլ թագաւոր թագաւորաց տիտղոսը, որ կը խորհինք թէ ու եւշ նպատակով չէր կարելի մեկնաբանել բացի արեւէլքի ժողովուրդներուն կինք աւելի ընդունելի զարձնելու համար: (Ammianus, Excerps of Valesius, էջ 35):

Պարթևները, կ'ըսէ Ամմիանոս, Արշակը կը յարգէին որպէս աստուած մը, և իրենց պաշտամունքը հանդէալ իրեն այնաքան յառաջ գացած էր որ, մինչև մեր օրերը, միմիայն Արշակի սերունդէն մարդ մը, եթէ ունէ անզ կայ համ մը, նախընտրելի է գահուն համար քան ուրիշները։ Նոյնիսկ քաղաքային կուրսներուն, որ չարունակ կը պատահի իրենց մէջ, ամէն անձ սրբազդութիւն կը համարէ ձեռք բարձրացնել Արշակունիի մը, հոգ չէ թէ սա զինուած է կամ պարզ քաղաքացի մը<sup>(22)</sup>։

Նոյնը Հայաստանի մէջ, Արշակունի ընտանիքը, որ ահա երեք հարիւր տարիէ ի վեր, հայկական զանը կը զրաւէր, ամէն բանէ վեր էր։ Անհամ Արշակունիներէն ուժանց գէմ եթէ ընդգում տեղի խոկ ունենար, ընտանիքին նույիրական վարկը կար ու կը մնար։ Հարիւր տարի ես սպէտք էր անցնէր որ, չարունակական հարուածներու, գաւերու և սագրանիքներու ճնշման տակ շիջէր այդ վեհափայլ վարկին նախամեծաբ լոյսը։

Համնիպալիսանոսը ինչ տիտղոսով ալ ներկայանար, անընդունելի էր հայկական բարձրաւանդակի ժողովուրդներուն։ Ռւսով երկիրը ժամանակակից պիտի կառավարէրէն երկու Հայ իշխանները, Անդոզիկ և Արշաւիր, մինչև Արշակունիի մը վերըստին պապենական թագով պատկուիլը։ Անդոզիկ, որպէս նահապետը Հայաստանի ամենամեծ նախարարութեան, Միւնիւ Խոկ Արշաւիր Կամսարական, հաւանաբար որպէս Արշակունի մեծ ընտանիքի մէկ ճիշդին պատկանելուն համար։

Շապուհ թագաւորի կրած այս առաջին ձախողութիւնը, հոգ չէ թէ սա իր ծրագրած մեծ և թերես երկարատես պատերազմի սկզբնական համախուզիչ մէկ բաղիսումն էր, չըշահայեաց խոհեմութիւն թելադրեց իրեն։ Անտարակոյս իր հայ զործակիցները, որոնք հիմա աքսորուած էին Բիւղանդական հրամանատարութեան կողմէ<sup>(23)</sup>, առանին մեծամեծ յոյսերով ներշնչած էին զինք՝ զիւրին յաջողութեան մը հեռաւնկարուի։

Զգոյչ ընթանալու էր, մտնաւանդ որ

երիտասարդ կոստանդիոսի և Հանճիսաւ-լիանոսի լեզունները հայկական հողերու վրայ էին։ Խոկ հետզհետէ, Շապուհի լըրտիս զործակալները պիտի իմացնէին թէ նոյնինքն Կոստանդիին Կայորը հոկայտական պատրաստութիւններու սկսած էր արևելեան մեծ արշաւանքի մը համար Պարսկաստանի գէմ, իր որդույն և եղբօրորդւոյն առաջին յաջողութիւնը վերջնական յաղաթանակով մը պատկելու համար։

Շապուհ զեսպաններ փութացուց կայ-սերական արքունիքը, թէ՛ ներկայի պատերազմական զոյազիճակի վերջացնելու, և թէ խոզազութեան նոր գաշինքի մը մասին բանակցութիւններ վարելու<sup>(24)</sup>։ Շա-պուհ զիտէր թէ զիւանագիտական խողեր երրեմն նոյնքան ազգու և նպաստաւոր ար-դիւնք կրնան տալ որքան սազմական յա-ջող գործողութիւնները։ Ան, տարիներու ընթացքին, երկու ճակատներու վրայ ալ ցոյց պիտի տար իր հնարամիտ ձեռնհասու-թիւնը։

Ան իրաւունք ունէր ակնածելու կոս-տանդին Կայորէն, որ մեծածաւալ կայու-րութեան առանձինն յողթական տէրն էր, զինու զօրութեամբ ճնշած, մէկը միւսին ետքէն, սպանակական մրցակիցները, և եթէ որոշէր, կրնար Կայորութեան բազմազան ժողովուրդներէն հոկայ բանակներ սազմա-զաւտ իշեցնել, աւելի ստուար և ահարկու-քան Պարսիկ թագաւորի համախմբածը։

Մեծն Կոստանդին մտահոգիչ փոփոր-կալի ամպ մըն էր Շապուհի աչքին Մեր-ձաւոր Արեւելքի այլապէս պայցծառ քաղա-քական երկնքին վրայ։ Ինսպաններու և բանակցութիւններու երկարատես տուր և առը՝ պիտի ծառայէր ժամանակ շահելու, և ո՞չ զիտէ, այդ միջոցին ինչե՛ր կրնային պատահիլ։

Ամպը, սակայն, առանց իր շանթը ար-ձակելու՝ յանկարծ չքացաւ։

Երբենուիլ (4)

ՀՐԱՄԱՎ. Ք. ԱՐՄԵՆ



(22) Ammianus, XXIIH. 6, 6.

(23) Julian, Vol. I. էջ 53.

(24) Փաւաստոս, դ. էջ 21.

ՄԱՏԵՎՈՅՐԸԿԱՆ

(ԽԵՒ) ՅԱՎՀԱՇԱՆԵԱԾ ԹԱԿՈՒՐԱՆՑԻ

Ա. ՎԻՊԵՐԳՆԵՐ

= 1 =

ՏԱՂ ՔԱԶԻ ԼԻՊԱՐՏԻՆ

Ա.

Ե Աստուծոյ անունն օրհնեալ, որ անըսկիզբն եւ անվախնան,  
Որ ուժ երես քաջ Լիպարտին, եւ զօրացոյց իւր սուրբ ծառայն:

Բ.

Ի սուրբ Մարգիս քաջն ի նըման, ի սուրբ Թորոս, ի սուրբ Վարդան,  
Քան ըզմուշեղ այլ խիստ յաղթող. քան ըզծրդատ Հայոց արբայն:

Գ.

Յորժամ հեծնուր զիւր ծին վազան, ի ծեռն առնոյր զըռում ճօնան,  
Սասանէր ազգըն Թուրքիմանց, դողայր ամէն Բարելաստան:

Դ.

Պատերազմին չըկայր խափան, ամէն տարի տասն եւ քըսան,  
Մինն ըզթումանըն հալածէր, արիւն հանէր զէտ զետ Զիհան:

Ե.

Ապա այլազն այն անհաւան . . .  
Օձ եւ կարին ի յիժ նըման.

Զ.

Զերթ քացխով տիկ չարեօք լըցան, ժողովը առին ւի Սիս եկան,  
Մանչակ անուն չարեաց մառան, մօտ ի քաղաքն եկան հասան:

Նախօք. — Բնազիր կ = Սիսուան, Ա-  
լիշան, 1885, էջ 226: — Հմմ. Տ = կ.  
Կառառանեանց, Յոզէ. Թէկուրանցի, 1892,  
էջ 52, Սիսուանէն առնուած: — Հ = Հա-  
յապատում, Ալիշան, 1901, էջ 539: —  
Յուշ, = Յուշիկը, Ալիշան, Բ. էջ 511, 3  
տաւն միայն: — Ե = Հ. Նիրուէս Ակինհան,  
Հանդէս Ամաօրեայ, 1933, էջ 135:  
Ա. 1. — Ե Աստուծոյ, Տ Ն Յուշ, ՅԱԽ-  
տուծոյ, կ: օրհնած, Յուշ, : — 2. — Որ  
ուժ երես յաջ Լիպարտին, Յուշ. Ար ետուր  
ուժ Լիպարտին, կ:  
Բ. 1. — Ի սուրբ Մարգիս քաջին նման,  
Յուշ. Զերթ . . . կ: — 2. — Քան ըզմուշեղ

այլ խիս յաղրող, Յուշ, : Քան ըզմուշեղն  
յաղթող եղեալ, կ:

Գ. 2. — Օտրանց, կ. (հզիպտական)  
Հ. Թուրքմանաց, Ն. Օտարքաստան, կ.  
Տաճկաստան, Հ. Թուրքմանաստան, Ն. : —  
Գ. Չունի, Յուշ . . .

Գ. 1. — Պատերազմիլ եկիր հափայն,  
Յուշ, : — 2. — Ինքն ըզթուման հալածա-  
նէր, արիւն հաներ զետեր Զիհան, Յուշ.  
Ինքն ըզթուրքմանըն . . . ն:

Ե. — Այս երկու թերի տողերը առինք  
Հայապատումէն, Սիսուանի մէջ կախման  
կէտեր միայն կան:

Զ. Մառան — աման, Հ:

**Է.**

Վաթսուն հազար մարդ միաբան, զրբէնն հագան և ի ծին հեծան, Զեռուին առին զըռում ճօնան, թուր և ասպար, ու կանգնեցան:

**Ը.**

Վաթսուն հազար այլազք ելան, ձայն ծըգեցին ու կատղեցան, Հարին ըզփող պատերազմին, ըզպուկն ու զնամիիրն ըզգաւհարկան:

**Թ.**

Այն անօրէն չար կենդանիքն, որ են նորա այլազական, Եւ ի յահէն բազ Լիպարտին զինչ զուռ դողան, առաջ չի զան:

**Ժ.Ա.**

Յայնժամ առէ սուրբ թագաւորն, բազ Լիպարիտ, մեծ զօրական, Հնձելըս քեզ համար եկան, մինչ յայս տեղիս ուր կանգնեցան:

**Ժ.Ա. Հ.**

Վաթսուն հազար մարդ կոտրեցիր, ու զՄանչակին զոված տրդան, Առիր ըզթախտըն Սուլթանայ, բերիր ծիան ու շատ թուրբման:

**Ժ.Ա. Հ. Հ.**

Քաղցրիկ ետուր պատասխանի, թէ, ես՝ բաղքիս չարին փոխան, Բայց չէ պատնի զրուց առնել, թէպէտ հասաւ ինծ օր մահուան:

**Ժ.Գ.**

Եզ եւ թամրեաց զիւր ծին վազան, հազաւ զրէն և ի վերայ նօշան, Ի զլուխն եղիր յաղթող վանան, ի ծեռն էառ զըռում ճօնան:

**Ժ.Գ. Հ.**

Երկըրպագեաց սուրբ աթոռոյն, եւ ծունք եղիր ամէն խորան, Փառաւորեաց զերրորդութիւն, զովեաց զիշխանսըն միաբան:

**Ժ.Ե.**

Հառնեաց, զորդեակըն համբուրեաց, հանց որ զնեծելն ի լաց ենան, Ասաց. Օրդեակ իմ Յովհաննէս, Վասիլ, եղբայր իմ սիրական,

**Ժ.Զ.**

Փառօք տիկին դու Մանանայ, իշխանունի արեւնըման, Հայեաց պատկերս ի մանկութեան, որ տի մտնում ի հող տապան:

**Ժ.Հ.**

Քաջ Լիպարիտ ասաց ցարքայն. Հայոց թագւոր ազնուական, Հաստատ և ամուր պահէ զկարմունքն, որ ես մտնում ի մէջն ու զամ:

Բ. 1. — Ա. Հ. Ա. Պ. Ք. — օարանց, Կ. (Պօ-  
րաց) Հ. Թուրքմանի, Ե.  
Բ. 1. — Օտարական, Կ. այլանըման,  
Հ. Թուրքմանական, Ե.:

Ված տղան ասիր, 2. — զթախտն թուրա-  
նայ ՞ բերիր, Ճիանուն չատ թախտան ՞,  
Կ. — Եալունարեցինք Ակինեանի բարեփո-  
խած ձեւը:

Ժ.Ա. 1. — . . . որ զՄանչակին զո-

## Ճ.Բ.:

Յիշեաց զՔրիստոս ահնդանայն, կտրեց և անցաւ առի ծնըման, Զհնձելն արար փախըստական, և ի հնտն երթայր ընծանըման:

## Ժ.Թ.:

